

70-29

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱՉԻԿՅԱՆ ՍԱՐԳԱՐԻՏ ԼԵՎՈՆԻ

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՀԻՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ՝  
ԽՈՒՈՒԵՐԵՆԻ, ՈՒՐԱՐՏԵՐԵՆԻ, ԷԼԱՄԵՐԵՆԻ,  
ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ

Ժ. 02.03 - համեմատական և տիպարանական  
լեզվաբանություն մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների դոկտորի  
գիտական աստիճանի հայցման  
(գիտական զեկուցման ձևով)

Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մեծարժան հիշատակով  
ճակատագրաբանությամբ  
սրբալի և հարգելի  
Վարդապետաբան  
Մկրտիչ

Ե Ր Ե Վ Ա Ն - 1999

## Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

### Թեմայի արդիականությունը

Աշխարհի հնագույն քաղաքակրթությունների բնօրրանի՝ հին Առաջավոր Ասիայի ժողովուրդների պատմությունը, մշակույթը, գիտությունը, կենցաղը, աշխարհայացքը ուսումնասիրելու համար կարևորագույն աղբյուր են հանդիսանում հինարևելյան լեզուներով ստեղծված հարյուր հազարավոր ամենատարբեր բնույթի գրավոր հուշարձանները: Սակայն միայն այդ հանգամանքով չէ, որ պայմանավորված է այդ լեզուների ուսումնասիրության կարևորությունը: Հին Արևելքի լեզուների ծագումնաբանական բազմազանությունը (բացի հնդեվրոպական և սեմական լեզվաընտանիքների ներկայացուցիչներից, այդ տարածքում վկայված են նաև մեզ հայտնի այլ լեզվաընտանիքների հետ հեռավոր ցեղակցական կապ ունեցող կամ լիովին մեկուսացած մի շարք լեզուներ. խուտիերենը և ուրարտերենը, էլամերենը, խաթերենը, շումերերենը), ինչպես նաև ժամանակագրական ընդարձակ շրջանակները, մի կողմից, հնարավորություն են ընձեռում հետևելու այդ լեզուների զարգացման ընթացքը երկարատև ժամանակահատվածում (մի քանի հարյուրամյակից մինչև 2-2,5 հազարամյակ առանձին լեզուների համար), մյուս կողմից, բացահայտելու տարբեր ծագում ունեցող լեզուներին բնորոշ առանձնահատկությունները և ընդհանրությունները:

Այսպիսով, վերոհիշյալ լեզուները հետաքրքրություն են ներկայացնում ինչպես պատմահամեմատական լեզվաբանության, այնպես էլ լեզվաբանական տիպաբանության բնագավառի մասնագետների համար:

Ատենախոսությունը նվիրված է վերը նշված լեզուներից երեքին. խուտիերենին, ուրարտերենին և էլամերենին:

Ատենախոսության քեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի գիտական խորհրդում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ԱՄԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ ՍԵՐՈՐԻ  
բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

ԿԱՆԵՎԱ ԻՐԻՆԱ ՏՐՈՖԻՄՈՎՆԱ  
բանասիրական գիտությունների դոկտոր

ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵՐՍԵՍ ԱԼԵՔՍԱՆԻ  
բանասիրական գիտությունների դոկտոր

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է 1999թ. դեկտեմբերի 3-ին, ժամը 12-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի 019 միացյալ մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 375001, Արթվյան 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի գրադարանում:

Ատենախոսությունն առաքված է 1999թ. նոյեմբերի 3-ին:

Մասնագիտ. խորհրդի  
գիտ. քարտուղար՝ Բ.Գ.Ք.

*Ջիվադյան* Ն. ՄԻՄՈՆՅԱՆ

## Աշխատանքի նպատակն է.

- նկարագրել վերոհիշյալ լեզուները, ներկայացնելով նրանց բերականական կառուցվածքը զարգացման մեջ և
- բնութագրել այդ լեզուները բովանդակային (կոնտենսիվ) տիպաբանության տեսանկյունից<sup>1</sup>:

## Աշխատանքի տեսական և մեթոդական հիմքերը, աղբյուրները և գրականությունը

Աշխատանքում օգտագործվել են պատմահամեմատական և լեզվաբանական տիպաբանության, հատկապես պատմական եզվ կոնտենսիվ տիպաբանության մեթոդները:

Ուսումնասիրության համար աղբյուր են ծառայել մեզ հասած խուռիերեն, ուրարտերեն և էլամերեն բոլոր տեքստերը:

Հայցողը լայնորեն օգտագործել է վերոհիշյալ լեզուների հետազոտությանը, ինչպես նաև լեզվաբանական տիպաբանությանը նվիրված գիտական գրականությունը:

## Աշխատանքի նորույթը

Ատենախոսության թեմային նվիրված հոդվածների և 2 մենագրությունների մեջ քննարկվում և նոր լուծում են ստանում

<sup>1</sup> Կոնտենսիվ տիպաբանության հիմքում ընկած են զանազան լեզուներում իրականության սուբյեկտային-օբյեկտային հարաբերությունների արտացոլման եղանակների տարբերությունները: Այդ տիպաբանության շրջանակներում առանձնանում են դասային (классный), ակտիվ, էրգատիվ և նոմինատիվ տիպերը: Սրանցից յուրաքանչյուրը բնութագրվում է տվյալ տիպին հատուկ սեմանտիկ դետերմինանտով, որով պայմանավորված է լեզվի ամբողջ համակարգը իր բոլոր մակարդակներում (բառային, շարահյուսական, ձևաբանական և երբեմն ձևահնչույթաբանական):

Դասային տիպի համար սեմանտիկ դետերմինանտը դասային դերերի հակադրությունն է, ակտիվ տիպի համար՝ ակտիվ : ինակտիվ սկզբունքների հակադրությունը, էրգատիվի համար՝ ագենտիվի (գործողությունը կատարողի) և ֆակտիտիվի (գործողությունը կրողի) և, վերջապես, նոմինատիվ տիպի համար՝ սուբյեկտի և օբյեկտի հակադրությունը:

Այս տիպաբանության սկզբունքները, որի հիմքում ընկած են Ի. Բ. Մեշանինովի և ճրադպրոցի

լեզվաբանների ուսումնասիրությունները, շարադրված են Գ. Ա. Կլիմովի *Очерк общей теории эргативности*, М., 1973; *Типология языков активного строя*, М., 1977; *Принципы контенсивной типологии*, М., 1983, աշխատություններում:

ուսումնասիրվող լեզուների բազմաթիվ վիճելի հարցեր, բացահայտվում և լուսարանվում են քերականության առանձին տարրեր:

Լեզվական տարբեր մակարդակների մանրամասն վերլուծության շնորհիվ ճշգրտվում է այդ լեզուների տիպաբանությունը, որ իր հերթին հնարավորություն է ընձեռում պարզաբանելու առաջին հայացքից անբացատրելի քվացող լեզվական որոշ երևույթներ, ինչպես նաև վերականգնելու հատվածաբար մեզ հասած այդ լեզուների մի շարք ձևեր:

## Աշխատանքի քննարկումը և պաշտոնական արժեքավորումը

Ատենախոսության առանձին մասերը կազմող հոդվածները և մենագրությունները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնում և հրատարակվել տեղական և արտասահմանյան հանդեսներում և ժողովածուներում:

Ատենախոսության թեմային վերաբերող գեկուցումներով և դասախոսություններով հայցողը հանդես է եկել Երևանում և Հայաստանից դուրս մի շարք գիտաժողովներում և համալսարաններում (Լեյդեն, Լեյպցիգ, Լենինգրադ, Լոնդոն, Մոսկվա, Պոզնան, Վասնաար, Փարիզ):

## I. Խոռիերեն և ուրարտերեն լեզուները

Սևրմագրի այս բաժնի հիմքում ընկած է հայցողի “Хурритский и урартский языки” մենագրությունը որոշ փոփոխություններով և լրացումներով, որոնք գրքի հրատարակությունից հետո կատարված աշխատանքի արդյունք են և իրենց արտացոլումն են գտել մենագրությունից հետո լույս տեսած հոդվածներում:

Ելնելով այն հանգամանքից, որ այդ երկու լեզուները ցեղակից են, նպատակահարմար ենք համարել դրանք ներկայացնել զուգահեռաբար, ինչը հնարավորություն կտա ավելի ակնառու դարձնել այդ լեզուների միջև եղած նմանությունները և տարբերությունները:

## Աղբյուրները

Խոռոչներեն լեզվով վկայված են Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններից ծագող բազմաբնույթ տեքստեր, որոնցից հնագույնը թվագրվում է մ. թ.ա. III հազարամյակի II կեսով, իսկ ամենաուշ տեքստերը վերաբերում են մ.թ.ա. XIII դարին: Դրանք են.

ա) Շինարարական արձանագրություն Սիրիայում գտնվող Ուրկեշ քաղաքից, III հազ. II կես;

բ) մի շարք հմայական տեքստեր Բաբելոնից և Մարիից (քաղաք Եփրատի միջին հոսանքում), II հազ. սկիզբ;

գ) Սիրիայում (Տել-Բրաք) հայտնաբերված մի նամակ, հավանաբար, XV դ.;

դ) Միտաննի խոռոչական տեքստի արքա Տուշրատայի փարավոն Ամենհոտեպ III-ին հասցեագրված ծավալուն նամակը, XIV դ. ;

ե) Բողազքայի (Փոքր Ասիա) արխիվում հայտնաբերված մեծաթիվ ծիսական, գրական, առասպելաբանական տեքստեր և գուշակություններ, ինչպես նաև խոռոչ-խեթական երկլեզու մի քանի տեքստ, XIV-XIII<sup>2</sup>;

զ) Սիրիայի ծովափնյա Ուզարիտ քաղաքից ծագող որոշ թվով պաշտամունքային տեքստեր, XIV դ.: Դրանց մի մասը, ի տարբերություն մյուս խոռոչներեն տեքստերից, գրված է ոչ թե շումերա-ակկադական սեպագրով, այլ տեղական (արևմտասեմական ծագում ունեցող) սեպագիր 'այբուբենով': Այստեղ հայտնաբերվել են նաև շումերա-ակկադական սեպագրով գրված շումերա-ակկադական, շումերա-ակկադա-խոռոչական և շումերա-ակկադա-խոռոչ-ուզարիտական բառարանների հատվածներ, ինչպես նաև Կարքեմիշ քաղաքից ուղարկված մի նամակ և ակկադա-խոռոչական խրատական բնույթի մի բիլինգվա:

<sup>2</sup> Այդ բիլինգվայի խոռոչական տարբերակի նախատիպը, ամենայն հավանականությամբ, գրվել է Սիրիայում շատ ավելի վաղ շրջանում:

է) Սիրիայի մեկ այլ վայրում (Էմար-Մեսքենե) հայտնաբերված շումերա-խոռոչական բառացանկի հատվածներ, գուշակություններ և մի շարք այլ բնույթի տեքստեր:

Խոռոչներեն բառապաշարը, մասամբ նաև քերականական կառուցվածքը ուսումնասիրելու համար կարևոր նյութ են պարունակում խոռոչաբնակ Առափխայի (Կերկուկ) խոռոչալեզու գրիչների կողմից գրված ակկադերեն տեքստերը:

Ուրարտերեն լեզվի հուշարձանները (թվով մինչև 500), որոնք թվագրվում են IX դ. վերջով - VI դ. սկզբով, հայտնաբերված են Հայկական լեռնաշխարհի և հյուսիսային Իրանի տարբեր վայրերում: Նրանց հիմնական մասը վիճակի տարեգրություններ են, շինարարական բնույթի տեքստեր, զոհաբերությունների մասին հրահանգներ: Վկայված են նաև երկու ուրարտա-ակկադական երկլեզու տեքստեր: Ձգալի թիվ են կազմում անոթների, զենքերի և այլ առարկաների վրա գրված փոքրածավալ արձանագրությունները: Հայանի են նաև փոքրաթիվ (մոտ 30) կավե սալիկների վրա գրված տնտեսական և վարչական բնույթի տեքստեր և նամակներ:

## Ուսումնասիրության ներկա վիճակը

Խոռոչներենի ուսումնասիրությունը արդեն մեկ հարյուրամյակի պատմություն ունի, սակայն խոռոչագիտությունը մեծ թափ է ստանում 60-ական թվականներից սկսած՝ Ֆրիդրիխի, Լարոշի, Քամենհուբերի, Դյակոնովի, Հասզի, Թիլի, Վիլհելմի, Սալվինիի, Վեգների, Գիրբայի, Նոյի, Նոզաճեի և հայցողի աշխատանքների շնորհիվ:

Ներկայումս հրատարակված են բոլոր հայանի խոռոչներեն տեքստերը և պարզված է 500-ից ավելի բառերի նշանակությունը:

1980 հրատարակվել է Լարոշի կազմած խոռոչներեն բառարանը<sup>3</sup>:

<sup>3</sup> E. Laroche, Glossaire de la langue hourrite, Paris, 1980.

Խոռիերենի քերականությանը նվիրված վերջին մենագրությունը, որը հաջորդել է Սփայգերի<sup>4</sup>, Բուշի<sup>5</sup>, Ֆրիդրիխի<sup>6</sup>, Դյակոնովի<sup>7</sup> և Թիլի<sup>8</sup> գործերին, պաշտպանության ներկայացված աշխատանքն է:

Ուրարտերենի, ինչպես և խոռիերենի, ուսումնասիրությունը սկիզբ է առել անցյալ դարի վերջում, թեև լեզվի վերծանման առաջին փորձը արվել է Հինքսի կողմից արդեն 1848թ.:

Ուրարտերենի ուսումնասիրության մեջ իրենց ավանդն ունեն Սեյսը, Բեյքը, Լեման-Հաուստը, Մառը, Մանդալյանը, Մեշչանինովը, Ղավանցյանը, Ծերեթելին: Սակայն ուրարտագիտությունը, ինչպես և խոռիագիտությունը, նոր թափ է առնում 60-70-ական թվականներից Ֆրիդրիխի, Դյակոնովի, Մելիքիշվիլիի, Հարությունյանի, Ջահուկյանի, Բենեդիկտի, Սավվինիի, Վիլիերմի, Իսրայելյանի, Կարազոյանի և հայցողի աշխատանքների շնորհիվ:

Ուրարտերեն տեքստերի կորպուսներ են հրատարակվել Քյոնիգի<sup>9</sup> և Մելիքիշվիլիի<sup>10</sup> կողմից: Հրատարակության ընթացքում է գտնվում Հարությունյանի ուրարտական տեքստերի նոր կորպուսը:

Ուրարտերեն բառացանկեր են գետեղված Քյոնիգի և Մելիքիշվիլիի կորպուսներում և Դյակոնովի 'Урартские письма и документы' (М.-Л., 1963) աշխատությունում: Հայտնի է մոտ 300 ուրարտերեն բառերի նշանակությունը:

<sup>4</sup> E. A. Speiser, Introduction to Hurrian, New Haven, 1941.

<sup>5</sup> F. W. Bush, A Grammar of the Hurrian Language, *Brandeis University Dissertation*, 1964, Ann Arbor, Microfilm.

<sup>6</sup> J. Friedrich, Churritisch, *Handbuch der Orientalistik* VIII/2, 1969, 1-30.

<sup>7</sup> I. M. Diakonoff, Hurrisch und Urartaisch, *Münchener Studien zur Sprachwissenschaft*, Beiheft 6, NF, München, 1971.

<sup>8</sup> H.-J. Thiel, Phonetik und Grammatik des Hurrischen, *Das hurritologische Archiv. Corpus der Hurri(t)ischen Sprachdenkmäler des Altorientalischen Seminars der Freien Universität Berlin*, Berlin, 1975, 98-239.

<sup>9</sup> F. W. König, Handbuch der chaldäischen Inschriften, 2 Teile, *Archiv für Orientforschung*, Beiheft 8, Graz, 1955, 1957.

<sup>10</sup> Г.А. Меликшвили, Урартские клинообразные надписи, М., 1960; Урартские клинообразные надписи II, *ВДИ*, 1971, n 3, 229-245; n 4, 267-294.

Պաշտպանության ներկայացվող աշխատանքը վերջինն է ուրարտերենի քերականությանը նվիրված մենագրությունների շարքում: *Մենագրության I գլխում* հայցողը համառոտակի անդրադառնում է խոռիերեն և ուրարտերեն լեզուների ծագումնաբանության հարցին, հակվելով Դյակոնովի և Մտարտսիհի կողմից առաջարկված վարկածին, որի համաձայն այդ լեզուները պատկանում են արևելակովկասյան լեզվաընտանիքին<sup>11</sup>:

Նույն գլխում շոշափվում են նաև այդ լեզուների ափսաբանության և բարբառների խնդիրները (ավելի մանրամասն այդ հարցերը կրճնարկվեն ստորև):

*II գլուխը* նվիրված է խոռիերենի և ուրարտերենի գրին (շումերա-ակկադական սեպագիր) և ուղղագրական համակարգերին (հին ակկադական, բաբելոնյան, խոռի-խեթական, միտաննիական՝ խոռիերենում և ուրարտական՝ ուրարտերենում):

#### Հնչյունաբանություն

Խոռիերեն և ուրարտերեն տեքստերում հանդիպող ուղղագրական տարբերակների բնությունը, հատուկ անունների համադրումը այլ լեզուներից (հատկապես հայերենից և հունարենից) հայտնի ձևերի հետ, հնարավորություն են տալիս ընդհանուր գծերով վերականգնելու խոռիերենի և ուրարտերենի հնչյունական համակարգերը և բացահայտելու խոռի-ուրարտական հնչյունական համապատասխանությունները:

#### Չայնավորներ

Խոռիերենում և ուրարտերենում վերականգնվում են a, i, u, o, e ձայնավորները: Բառավերջի i և e ձայնավորները սղվում էին:

<sup>11</sup> I. M. Diakonoff, S. A. Starostin, Hurro-Urartian as an Eastern Caucasian Language, *Münchener Studien zur Sprachwissenschaft*, Beiheft 12, NF, München, 1986.

Ոչ խուռիերենում, ոչ էլ ուրարտերենում ձայնավորները չէին սարբերակվում ըստ տևողության, իսկ նրանցում, հատկապես ուրարտերենում, հանդիպող ձայնավորների բևե գրությունը, արտահայտել է ձայնավորների միաձուլում, ինչպես նաև գործածվել է պատմական ֆարինգալների անկման դեպքերում (տե՛ս I. M. Diakonoff, S. A. Starostin, նշված աշխատություն, էջ 15): Հաշվի առնելով այս փաստը, ինչպես նաև այն հանգամանքը, որ բևե գրությունը ակկադերենում, հավանաբար, տոնի արտահայտման միջոց է եղել, թույլ է ապիս ենթադրել, որ նման գործառությանը այն հանդես է եկել նաև խուռիերենում և ուրարտերենում:

Բևե գրության վերաբերյալ արտահայտվել է նաև այլ կարծիք, ըստ որի խուռիերենում ձայնավորները հակադրված էին ըստ լարվածության և բևե գրությունը, հավանաբար, այդ սարբերությունը արտահայտելու միջոց էր (տե՛ս H.-J. Thiel, նշված աշխատություն, էջ 99):

#### Բաղաձայններ

Խուռիերենին հատուկ էր բաղաձայնների հակադրությունը ըստ ինտենսիվության: Ինտենսիվ բաղաձայնները, որոնք որոշ ուղղագրական համակարգերում արտահայտվում էին բաղաձայնի կրկնությամբ, միշտ խուլ էին:

Ի սարբերություն լարվածներից, ոչ-ինտենսիվ բաղաձայնները սարբերվում էին ըստ ձայնեղության, սակայն այդ սարբերությունը հնչույթաբանական բնույթ չէր կրում և կախված էր սոսկ այդ բաղաձայնների դիրքից. միջձայնավորական (ինտերվոկալ) դիրքում նրանք ձայնեղ էին, իսկ բառասկզբում և այլ բաղաձայնի հարևանությամբ՝ խուլ:

Ուրարտերենում բաղաձայնները հակադրվում էին ըստ ձայնեղության (խուլ : ձայնեղ) և ըստ կոկորդային հպման ներկայության կամ բացակայության (աբրուպտիվ : ոչ-աբրուպտիվ):

Աբրուպտիվների հակադրությունը ըստ ձայնեղության չի բացահայտված: Այդ բաղաձայնները արտահայտվում էին հայերենում խուլ բաղաձայններով, իսկ ոչ-աբրուպտիվները՝ շնչեղներով. Էս-սժ-թա = Տոսպ, Տս(-ս)-թա-ա = Ծոփք:

Ինտենսիվ բաղաձայններ կամ, համեմայն դեպս, դրանք արտահայտելու միջոց ուրարտերենը չի ունեցել:

*Խուռիերենում* վերականգնվում են հետևյալ բաղաձայնները. b/p, p'<sup>12</sup>, d/t, t', g/k, k', v/f, f'; z/s, s', y/h, h' z/c, c', kh/g, m, m', n, n', l, l', r, r', w.

Խուռիերենի հնագույն բարբառներում Յդ. եզակի թվի դերանվանը հատուկ -b//m հերթագայությունը (տե՛ս Ադյուսակ 5), հավանաբար, վկայում է առնվազն այդ բարբառներում ոնգայնացված հնչյունների գոյության մասին:

Լ' և r' բաղաձայնները, ըստ ամենայն հավանականության, Լ և r ձայնորդների ինտենսիվ տարբերակները չէին: Այդ բաղաձայնների արտասանությունը պարզելուն, թերևս, կարող է նպաստել հայերենը իր Լ : Է և r : ր' հնչույթների հակադրությամբ, որը, ըստ ամենայն հավանականության, պետք է դիտել որպես խուռի-ուրարտական ենթաշերտային երևույթ: Այն փաստը, որ Լ'-ն համապատասխանում է հայերեն Է-ին *աղախին* բառում (ըստ երևույթին, խուռի-ուրարտական al'- «տիրել» արմատից, իսկ խուռիերեն r'-ն՝ հայերեն r-ին *ծառայ* բառում (<խուռի-ուրարտական sarrae “նազմագերի”)), թույլ է ապիս ենթադրել, որ խուռիերենում Լ-ով արտահայտված հնչյունը արտասանությամբ մոտ էր հայերենի Է-ին, իսկ կրկնակի r-ով նշանակվածը՝ հայերենի ր-ին:

*Ուրարտերենում* վերականգնվող բաղաձայնների մինիմալ համակարգը հետևյալն է. b, p, p'<sup>13</sup>, d, t, t', g, k, k', v, f, z, s, z', c, c', y, h, kh, m, n, l, r, w(?):

Սեպագրի հնարավորությունները թույլ չեն ապիս պարզել, թե, արդյոք, խուռիերենին և ուրարտերենին շշական հնչյուններ հայանի են եղել, թե՞

<sup>12</sup> Տառի վերևում աջ կողմից դրված կետը լարվածություն, ինտենսիվություն է նշանակում:

<sup>13</sup> Ապարարքը արտահայտում է աբրուպտիվություն (կոկորդայնություն):

ոչ: Սակայն այն փաստը, որ հայերենում վաղ արիական *պայծառ* <\*patičarana և *ծիրանի* <\*čirānya- (տե՛ս Bailey, *Annali del Istituto da Napoli*, 1959, 122, 124-125) փոխառություններում արիերենի շշական ձևն համապատասխանում է *c* սուլական աֆրիկատը, նշանակում է, որ այն լեզուն, որի միջոցով այդ բառերը անցել են հայերենին, շշական բաղաձայններ չի ունեցել: Իսկ քանի որ ավյալ դեպքում ամենահավանական միջնորդը խուռի-ուրարտական որևէ բարբառ պետք է լիներ, կարելի է եզրակացնել, որ խուռի-ուրարտերենը կամ, առնվազն, խուռի-ուրարտական որոշ բարբառներ շշական բաղաձայններ չեն ունեցել:

### Շեշա

Խուռիերենին և ուրարտերենին հատուկ էր կայուն էքսպիրատոր շեշա նախավերջին վանկին: Դա հետևում է այդ լեզուներում վերջին վանկի *i* և *e* ձայնավորների չեզոքացումից<sup>14</sup>. խուռ. *ašte* 'կին', *aštive* 'կնոջ', *tive* 'խոսք, բան', *tivena* 'խոսքեր, բաներ'; ուրարտ. *ese* 'տեղ', *esine* 'տեղից', *ušmaše* 'հզորություն', *ušmašine* 'հզորությամբ', *šu/ore* 'զենք', *šu/orele* "զենքեր":

### Բառապաշար

Հաջորդ, խուռիերենի և ուրարտերենի բառապաշարին նվիրված գլխում, քննարկվում են այդ լեզուների բառապաշարի ընդհանրությունների, ինչպես նաև խուռիերենում և ուրարտերենում այլալեզու փոխառությունների և այլ լեզուներում խուռի-ուրարտական փոխառությունների հարցերը:

Խուռի-ուրարտական հավասարի համապատասխանությունների թիվը չի անցնում 50-ից.

*ag-* 'տանել', *ak(k)-* - դեյկախկ դերանվանական հիմք, *al(l)-* 'տիրել', *am(m)-* 'այրել', *ar-* 'տալ', *arde* 'քաղաք', *ašh-* 'զոհաբերել', *at(t)a/e* 'հայր',

<sup>14</sup> Վերջինս արտահայտվում էր *e* ձայնավորով:

*aye/awe-* 'ն՞վ', *edi-* 'պատճառով, համար' (<ede 'մարմին'), *i/en-* 'աստվածություն', *eš/ze* 'երկիր', *evre* 'տեր', *f/vavan-* 'լեռ', *ha-* 'վերցնել', *hare* 'ճանապարհ', *haš-* 'լսել', *henne* 'այժմ', *hut/d-* 'ճակատագիր (խ), բախտ, հաջողություն (ուր.)', *hurade* 'զինվոր', *in-* - դեյկախկ դերանվանական հիմք, *iye* - հարցական-հարաբերական դերանուն, *iš/yeš-* - 1 դ. անձնական դերանվանական հիմք, *k/qarg/qare* 'զրահ', *kure/ugre* 'ոտք', *mane* 'նա', *man(n)-* 'լինել', *nah-* 'նստել', *ole* 'այլ', *oye* - ժխտական մասնիկ, *pile* 'ջրանցք', *pura-* 'ստորով', *ša(wa)le* 'տարի', *šat(t)-* 'վերցնել', *šaure/šu/ore* 'զենք', *šin-* 'երկու', *šu/o-* - 1 դ. անուղղակի հոլովների անձնական դերանվանական հիմք, *šuhē* 'նոր', *šuhure/šehere* 'կենդանի, կյանք', *šui-* 'ամբողջ', *Teššob/Teyšeba* - ամպրոպի աստվածություն, *t/did-* 'բաժանել', *tiw/ye* 'խոսք', *tiš/ž-* 'սիրտ', *t/durb-* 'ապստամբել', *urb-* 'մորթել', *-ye* - 3 դ. ստացական դերանուն:

Այս ցանկը կարելի է համարյա կրկնապատկել պակաս վստահելի համապատասխանությունների հաշվին: Դա, անկասկած, քիչ չէ, եթե հաշվի առնենք, որ այն բառերի թիվը, որոնց նշանակությունը մեզ հայտնի է, խուռիերենում մոտավորապես 550 է, իսկ ուրարտերենում՝ շուրջ 300:

*Խուռիերենում* բավականին սովոր շերտ են կազմում ակկադական և շումերական (ակկադերենի միջնորդությամբ) փոխառությունները, որոնք պատկանում են հիմնականում հասարակական, մշակութային, առևտրի ոլորտներին, ինչպես, օրինակ, *enda* 'քուրմ', *kaššapte* 'կախարդանք', *sangunne* 'քուրմ', *šarre* 'արքա', *sukkalle* 'սուրհանդակ', *tamgare* 'վաճառական', *tupšarre* 'զրիչ', *zalamše* 'պատկեր', *hazize* 'ինաստուն' և այլն:

Հայտնի են նաև փոքրաթիվ փոխառյալ հնդարիական ձիավարական եզրեր. *fazanna* 'մրցահրապարակ', *aigavardanna*, *trivardanna*, *šattavardanna*, որոնք բաղկացած են - "1", "3", "7" թվականներից և, *vartani/a-* 'շրջադարձ' տարրերից:

Ուրարտերենում վկայված այլալեզու փոխառությունները, անհամեմատ ավելի փոքր թիվ են կազմում. kubuše 'սաղավարտ' ակկադերենից, kape - ծավալի միավոր և šu- 'լցնել' խեթա-լուվիական լեզուներից, ewe "և" շաղկապը հայերենից, ինչպես նաև հնդեվրոպական ծագում ունեցող pare 'մինչև' նախադիրը, mi արգելական մասնիկը, հավանաբար, ulguše 'կյանք', burgana "ամբոց" և մի շարք այլ բառեր:

### Բառի կառուցվածքը

Մենագրության հաջորդ գլխում բննարկվում են բառակազմության սկզբունքները խոտի-ուրարտերենում:

Խոտիերենը և ուրարտերենը կցական վերջածանցային լեզուներ էին՝ միավանկ (C<sub>1</sub>)VC<sub>2</sub>, (C<sub>1</sub>)VC<sub>2</sub>C<sub>3</sub> տիպի արմատով. խ.-ուր. ar- 'տալ', tan- 'անել', ašh- 'զոհաբերել', ha- 'վերցնել', evr- 'տեր':

Արմատին հաջորդող ածանցները բաժանվում են երկու խմբի. *բնակազմիչ* և *բառակազմական*:

*Առաջին խմբի ածանցները* կարող էին հետևել բառի արմատին կամ նույն խմբի մեկ այլ ածանցի: Այդ ածանցները, իրենց հերթին, բաժանվում էին երկու խմբի. բայական և անվանական:

Բայական բնակազմիչ ածանցների թվին են պատկանում. -am//an- (խոտ. tih-an- 'ցույց տալ', eman-am- "տասնապատկել", ուր. ked-an- 'ուղարկել'), -ar- (խոտ. urb-ar-inne "զոհը մորթող", ուր. tub-ar- 'ամրացնել'), -il- (խոտ. kad-il- 'պատմել', tuw-il- 'մաքրել', ուր. ab-il- 'ավելացնել, միացնել'), -ol- (խոտ. elam-ol- 'երդվել', ašh-ol- 'զոհ մատուցել', ուր. batq-ol- 'պաշարել'), -ik(k)- (խոտ. ašh-ož-ikk-unne 'զոհ մատուցող', ուր. urb-ik-a- 'զոհը մորթող'), -ug-ar-/-uy-ar- (խոտ. pu/oh-ugar- 'փոխանակել', tad-ug-ar- '(իրա՞ր) սիրել, pitt-ugar- 'խաղաղություն կնքել', ուր. kul-uy-ar-š- 'փախչել'), -Všt- (խոտ. ag-ugar-ašt- 'ուղարկել', tan-ašt- 'անել', ուր. am-ašt- 'այրել', šid-išt- 'կառուցել') և շատ ուրիշներ:

Անվանական ամենաառաջված ածանցներից են. -ad- (խոտ. amm-ade 'նախնի', ուր. hur-ade 'զինվոր'), -ar- (խոտ. aw-are 'ղաշտ', tem-are 'չբանցք', hiy-are 'ոսկի', ուր. pat-are 'քաղաք'), -al-/-el- (խոտ. šaphale 'ձալի', šaw-ala/e 'տարի', ուր. burg-ala- 'ղաշնակից'), -an- (խոտ. tarm-ane 'տղրյուր', ուր. eb-ane 'երկիր'), -i/er- (խոտ. maz-i/ere 'օգնական', ուր. šeh-i/ere 'կենդանի, ողջ'), -ib/-ub-/-b- (kar-ube "շտեմարան", erem-be 'մայրի', ուր. at-ibe 'բյուր', zil-be 'սերմ') -id-/-d- (խոտ. hub-ide 'հոբբ', kel-de 'բարօրություն', ուր. zel-de 'լյարդ'), -u/or- (խոտ. hinz-ore 'խնձոր', šid-u/ore 'աղջիկ', ušh-u/ore 'կողմ'):

Բնակազմիչ ածանցների գերակշռող մասի նշանակությունը անհայտ է: *Երկրորդ խմբի* ածանցները հետևում էին արմատին կամ առաջին խմբի ածանցներ պարունակող հիմքին: Ստորև բերված են այդ ածանցներից մի քանիսը.

*վերագական զոյականների -š(š)e*. խոտ. šarra-šše 'արքայություն', ուր. ulgu-še 'կյանք', bau-še 'խոսք, գործ'; խոտիերենում կիրառվում էր նաև երկրորդական նախադասության բայի զոյականացման համար;

*խմաստով նախորդին մոտ -šhe*. խոտ. ašta-šhe "կանացիություն", taba-šhe 'սոնականություն', tev-ušhe 'հրաման', ուր. uri-šhe 'գործիք';

*հավաքական զոյականների -arde* (խոտ.). el-arde 'քույրեր', šal-arde 'դուստրեր', wir-ad-arde 'ազնվականություն';

*վերագական զոյականների -tuhe* (ուր.). hutu-tuhe 'հաջողություն, բախտ', LUGAL-tuhe 'թագավորություն';

*անորոշ դերբայի/գործողության անվան -umme* (խոտ.). tad-ugar-umme 'սեր', itt-umme 'զալը, ժամանումը';

*անհատականազնող -nne* (խոտ.). ušria-nne "ժառանգ", sangu-nne "քուրմ", taršua-nne "մարդ";

*մասնագիտություն նշանակող -u/ore, -le, -uh-le* (խոտ.). iz-u/ore 'ստրիանդակ', pen-išh-u/ore 'վերակացու', tab-le 'ղարբին', emand-ušhe "տասնակավազ", zillik-ušhe 'վկա';



հարաբերական ածականների -(h)he, -Vzze (խոռ.), -use (ուր.). խոռ. favan-*he* 'լեռնային', hurwo-*he* 'խոտիական', hatto-*he* 'խաթական', hiyar-ohhe 'ոսկյա', ašt-ohhe 'կանացի', ašt-uzze 'կանացի', ուր. Sardure-*he* 'Սարդուրյան', Etiu-*he* 'Էտիվյան, at-use 'հայրական';

դասական քվականների -šše/ze (խոռ.), -še (ուր.). eman-*že* "տասներորդ", tumun-šalle '1/4', šišuhe (<šin-š-uhē) 'կրկին, երկրորդ անգամ';

ժխտական -ubad- (խոռ.). nire 'լավ', nir-ubade 'վատ':

*Բարաբարություն* և *արմատակրկնության* դերը խոտիերենում և ուրարտերենում շատ համեստ էր. խոռ. tumn+arbu "քառամյա", hāzāz- (<hāz-+hāz-) "լսել", ուր. har+hār-š- 'քանդել', qar+qar-ane 'զրահ':

Անվանական հիմքը խոտիերենում և ուրարտերենում ավարտվում էր բնակազմիչ (բեմատիկ) ձայնավորներով (-i, -e, -a, -u/o): Այդ ձայնավորների իմաստը պարզ չէ:

Բայի հիմքը նույնպես պարունակում էր բնակազմիչ ձայնավորներ, որոնց նշանակությունը, ի տարբերություն անվանականներից, հաջողվում է բացահայտել (տե՛ս էջ 40):

## Անուն

### Գոյական անուն

Խոտի-ուրարտերենում գոյականներին հատուկ էին ա) որոշյալ և ստացական առման, բ) քվի, գ) հոլովման քերականական կարգերը: Այդ կարգերի ցուցիչները գոյականների վերջավորություններ շրթայում գրավում են համապատասխանաբար I, II և III դիրքերը:

ա) *Որոշյալ առման* ցուցիչն է I դիրքը գրադեցնող -ne մասնիկը, որը, անշուշտ, ծագում է դեյկտիկ (ցուցական) դերանունից (հմ. խոռ. ane, anne, ուր. ine ցուցական դերանունները). խոռ. šīye-ne "չուրը, գետը", ուր. Haldi-ne 'Խաղին':

Այս մասնիկը կարող էր գրադեցնել ածանցների շրթայում նաև IV դիրքը, կցվելով սեռականի հոլովածկին: Նման դեպքերում նրան

հետևում էին հատկացյալի վերջավորությունները. խոռ. šen-iffu-we-ne-ž ašti-ž "իմ եղբոր կինը", Mit. III<sub>7</sub>; ուր. Tošpa-ni-nawe 'Տոսպայի (ասավածներին)': Այս գործառությունից հետևում է, որ -ne(-) մասնիկը IV դիրքում հանդես էր գալիս հարաբերակցական ֆունկցիայով, կցելով հատկացյալի վերջավորությունը հատկացուցչին: Այս կանոնը, սակայն, չէր տարածվում բոլոր հոլովների վրա, օր. այսպես կոչված 'գործիական' (instrumentalis/adverbialis) հոլովի -ae վերջավորությունը միանում էր անմիջապես սեռականի հոլովածկին, առանց -ne մասնիկի օգնության. Teššob-w(e)-ae (ոչ թե \*Teššob-we-n(e)-ae) tew-ae 'Տեշոբի խոսքով'<sup>15</sup>:

Այսպիսով, առաջին դիրքում -ne դեյկտիկ մասնիկը հանդես էր գալիս որոշիչ ֆունկցիայով, որը, սակայն, զգալիորեն տարբերվում է հայերենի կամ եվրոպական լեզուների որոշյալ հոդի գործառությունից: Չորրորդ դիրքում, ակնհայտորեն, աեդի է ունեցել ցուցական դերանվանական տարրի անցումը հարաբերականի (հմտ. որոշյալ հոդի գործածությունը հարաբերական դերանվան իմաստով գերմանական լեզուներում): Մա ցուցական դերանուն > հարաբերական դերանուն անցման միակ դեպքը չէ խոտի-ուրարտերենում: Այդ անցումը հաստիկ է նաև al-դերանվանական հիմքին, տե՛ս էջ 34:

Ելնելով մասնիկի որոշիչ և հարաբերակցական իմաստներից, խոտիագիտության մեջ այն ընդունված է կոչել որոշիչ-հարաբերակցական մասնիկ: Սակայն վերջերս Վիլիելմի կողմից կասկածի տակ է դրվել -ne մասնիկի որոշիչ ֆունկցիան<sup>16</sup>: Վիլիելմը կլնում է հետևյալ փաստերից՝

ա) այս մասնիկը վկայված չէ արտյուտիվ հոլովի ձևերում, այն ի հայտ է գալիս միայն անուղղակի հոլովներում և, հետևաբար, ոչ միայն IV, այլ

<sup>15</sup> St' u. G. Wilhelm, Zur Suffixaufnahme beim Instrumental, *Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians* 9, 1998, 178-180.

<sup>16</sup> St' u. G. Wilhelm, Zur Grammatik und zum Lexikon des Hurritische, *Zeitschrift für Assyriologie* 83, 1993, pp. 105-111.

նաև I դիրքում կատարում է հարսերակցական դեր, կապելով հորվական վերջավորությունը գոյական անվան հիմքին;

բ) խառնիքների արխայիկ բարբառներում, ինչպես նաև խառնախոս Նուզիի ակկադերենում, որն իր վրա էր կրում խառնիքների ուժեղ ազդեցությունը, վկայված են -ne մասնիկով դիրեկտիվ նշանակություն ունեցող ձևեր:

Այս երկու փաստերից Վիլհելմը եզրակացնում է, որ վերը բերված ձևերում գործ ունենք ոչ թե -ne հոդի, այլ դիրեկտիվ հոլովի ցուցչի հետ:

Առաջին հայացքից համոզիչ թվացող այս եզրակացության դեմ, սակայն, կարելի է առաջ քաշել հետևյալ առարկությունները. եթե ընդունենք, որ kudu kazi pelle-ne elgilla siye-ne “թող սավորն ընկնի ջրանցքը, (վրայի) նախշերը՝ գետը”, KBo XXXII 14 Vs. I<sub>57-58</sub>; Tessob... kešhe-ne nahgab ‘Թեշշորը նսանց գահին’, ibid 13 I<sub>4</sub>, նախադասությունների pille-ne, siye-ne և kešhe-ne ձևերում վկայված -ne ձևորդը ոչ թե -ne հոդն է, այլ դիրեկտիվ հոլովի վերջավորություն, կնշանակի, որ խառնիքների և ուրարտերենի հոլովական համակարգում ա) -ne հոլովական ձևորդը ունի երկու հակադիր նշանակություն՝ դիրեկտիվ և արխայիկ (խառնիքներին և ուրարտերենին հայանի է -ne վերջավորությունը ունեցող բացառական հոլովը, որն, ի դեպ, բացահայտվել է հենց Վիլհելմի կողմից<sup>17</sup>) կամ բ) խառնիքներում գոյություն ունեն նույնահունչ -ne ցուցիչով կազմված երկու սարքեր հոլովների՝ դիրեկտիվ և արխայիկ:

Մակայն ավելի հավանական է թվում այն ենթադրությունը, որ վերոհիշյալ pille-ne, siye-ne և kešhe-ne ձևերի -ne մասնիկը ոչ թե հոլովական ցուցիչ է, այլ արտյուտիվ հոլովի գոյականներին կցված որոշյալ հոդը (հմտ. հայերեն թարգմանության ‘ջրանցքը’, ‘ջուրը/գետը’ հայցական հոլովի գործածությունը տրականի կամ ներգոյականի

<sup>17</sup> G. Wilhelm, Der hurritische Ablativ-Instrumentalis /nel/, *Zeitschrift für Assyriologie* 73, 1983, pp. 96-113, նույնի, К хурритской и урартской грамматике, “Древний Восток” 5, Ереван, 1988, сс. 93-132.

փոխարեն): Իսկ այն առարկությանը, որ, արտյուտիվ հոլովի հետ -ne մասնիկը վկայված չէ, կարելի է հակադրել մի շարք օրինակներ, որոնցում այդ մասնիկը բացակայում է նաև ոչ-արտյուտիվ հոլովներում. *šeniffu-we-ne-z āsti-z*<sup>18</sup> “եղբորս կինը”, Mit., III 7; *Ihibe-ne ...unoza* “Իդիբեից բերեց/բերել սվեց’, նույն տեղում, I 85-86:

Հօգուտ այն կարծիքի, որ գոյականի վերջավորությունների շղթայում I դիրքը զբաղեցնող -ne մասնիկը որոշյալ հոդի իմաստ ուներ, խոսում է նաև այն փաստը, որ այդ դիրքում նրա փոխարեն կարող էին հանդես գալ ստացական հոդերը (նմանատիպ երևույթի հանդիպում ենք եվրոպական լեզուներում և, հատկապես, հայերենում, որտեղ որոշյալ և ցուցական / ստացական հոդերը միևնույն դիրքն են զբաղեցնում և կարող են փոխարինել միմյանց): Վերջիններս, լինելով, ըստ էության, ստացական դերանուններ, կրննարկվեն սառնակ՝ դերանուններին նվիրված բաժնում:

Անուդրակի խնդրի (այդ թվում և շարժման բայերի խնդրի) և ուղիղ խնդրի արտահայտումը միևնույն միջոցներով (արտյուտիվ հոլովով, որն, ինչպես հայտնի է, էրգատիվ լեզուներում անցողական բայերի ուղիղ խնդրի և անանցողական բայերի ենթակայի հոլովն է) հատկանշական չէ էրգատիվ տիպաբանության լեզուների համար, բայց հեշտությամբ բացատրվում է ակտիվ տիպաբանության շրջանակներում. ակտիվ տիպաբանության լեզուներին հետևել էր ոչ թե ուղիղ և անուդրակի, այլ մերձավոր և հեռավոր խնդիրների հակադրությունը, ընդ որում ակտիվ լեզուների մերձավոր խնդիրը ավելի ընդգրկում է էրգատիվ և նոմինատիվ լեզուների ուղիղ խնդրի համեմատությամբ և իր մեջ է ներառնում ոչ միայն անցողական գործողության, այլև ցանկացած ակտիվ գործողության խնդիրը<sup>19</sup>: Հետևաբար, արտյուտիվ հոլովի կիրառումը դիրեկտիվ իմաստով խառնիքների արխայիկ բարբառներից

<sup>18</sup> Բացառված չէ, սակայն, որ *āstiz* ձևում գոյականի հիմքին հետևում է 3 դ. եզակի բովի -y(e/i)- ստացական հոլը: \**āsti-y(e)-z*.

<sup>19</sup> Г. А. Климов, Типология языков активного строя, М., 1977, с.119

մեկում պետք է համարել լեզվի ակտիվ վիճակից եկող ռելիկտային երևույթ: Ի դեպ, այդ նույն երևույթը պահպանվել է լեզվի մեկ այլ հատվածում՝ ևս՝ անձնական դերանվանական ածանցների համակարգում (տե՛ս ստորև):

Հոգնակիակերտ ձևայքներն էին խտու. -a(z̄)- / ուր. -a(s)- ածանցը և 3դ. հոգնակի թվի անձնական դերանվանական խտու. -lla / ուր. -le մասնիկը (նմանատիպ երևույթի, երբ հոգնակիակերտ ձևադրի դերում հանդես է գալիս 3 դեմքի հոգնակի թվի դերանվանական մասնիկը, հանդիպում ենք էլամերենում. nappi-p «ասավածներ», šinu-p «նրանք եկան»): Հոգնակիակերտ այդ ցուցիչներից երկրորդը օգտագործվում էր ուրարտերենում և խառիերենի մի բարբառում (խառի-խեթական բիլինգվայում)

Աղյուսակ 1

	Խառիերեն	Ուրարտերեն
Հոլովները		
Աբսոլյուտիվ <sup>1</sup>	-0	-0
Էրզատիվ <sup>2</sup>	-z̄	-še
Սեռական	-we	-e(y), -ve
Տրական	-wa	-ye, -ve
Դիրեկտիվ	-da	-te
Բացառական-գործիական <sup>3</sup>	-ne	-ne
Բացառական	-dan	-tane
Ստատիվ/էստիվ	-a	-a
Գործիական	-ae	
Կոմիտատիվ	-ra	-rane
Էկվատիվ I	-nna	
Էկվատիվ II	-uš	

1) Անցողական բայի ենթակայի (տուբյեկտի) հոլովը:

2) Անանցողական բայի ենթակայի և անցողական բայի ուղիղ խնդրի հոլովը:

3) Ինչպես վերը նշվեց, բացասական հոլովի ցուցիչը, քեև ձևով համընկնում է, բայց չի նույնանում որոշիչ հոդի հետ: Դրանք տարբեր դիրքեր գրավող և տարբեր քերականական կարգեր արտահայտող նույնահունչ ձևայքներ են:

բ) Խոռիերեն և ուրարտերեն լեզուները ունենին երկու թիվ՝ եզակի և հոգնակի:

արսոլյուտիվ հոլովում<sup>20</sup>, առաջինը՝ մնացած հոլովածներում. խտու. elgi-lla (արս.) 'նախշեր', tiwe-na (արս.) 'խոսեր', šewe-n-až-už (էրզ.) 'զետեր', ուր. arnušine-le (արս.) 'արարքներ', taršua-n-a-rane 'մարդկանց հետ':

գ) Գոյականի բառաձևում վերջավորությունների շրջայում հաջորդ դիրքը զբաղեցնում էին *հորվական ցուցիչները*, աես Աղյուսակ 1:

Ածական անուն

Ածականները, բացի հասուկ ածականակերտ ածանցներ ունեցողներից (աես էջ 15), ձևով գոյականներից չէին տարբերվում:

Ածականները թվով և հոլովով համաձայնվում էին գոյականների հետ. խտու. tiwe-na talame-na «մեծ բաները, գործերը», Mit. II<sub>75</sub>, ուր, Rusa-še Erimenahi-ne-še «Ռուսան, Էրիմենայի որդին/ Էրիմենյանը», YKH 288<sub>1</sub>:

Թվական անուն

Տերստերում վկայված խառիերեն և, հատկապես, ուրարտերեն րվականները շատ փոքրաթիվ են: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ թվերը սովորաբար գրվում էին հասուկ րվանշաններով:

<sup>20</sup> Հոգնակիակերտ -na և -(la) ածանցները այդ տեքստում գործածված են կողք կողքի: Ցավոք, նրանց գործածության մեջ որևէ օրինաչափություն չի հաջողվում բացահայել: Տպախորություն է ստեղծվում, որ այն փոխվում է սալիկից սալիկայսիքն, հավանաբար, գրչից գրիչ (°):

Խոռոխերենից մեզ են հասել *šukk-* “1”, *šine* “2”, *kig-*“3”, *tumne*“4”, *nari(a)*“5”, *šese* “6”, *šinda/sitta* “6”, *niže* “9”, *tamra* “9”, *eman-* “10”, *kizē* “30”, իսկ ուրարտերենից՝ *šuse* “1” և *\*šin-* “2” (վկայված է *šis-uhane*, *šis-tine* ‘կրկին’ մակրայնների կազմում):

*Ղասական քվականները* խոռոխերենում և ուրարտերենում կազմվում էին *-še* ածանցով՝ խուռ. *šin-še* ‘երկրորդ’, *eman-še* ‘տասներորդ’, ուր. *šis-šē* (<*\*šin-šē*):

Խոռոխերենից հայանի *kiginu/o/šše* “1/3” և *tumun-š-alle* “1/4” ձևերից կարելի է ենթադրել, որ կոտորակների հայտարարը կազմվում էր (-*nu/o*)-*šše* ածանցով:

*Բաշխական քվականները* կազմվում էին, հավանաբար, *-d-ae* ածանցի օգնությամբ. *kiga-d-ae* ‘երեքական’, *šinda-d-ae* ‘յոթական’:

Աղյուսակ 2

	Խոռոխերեն		Ուրարտերեն	
	Եզակի ք.	Հոգնակի ք.	Եզակի ք.	Հոգնակի ք.
Աբսոլյուտիվ	<i>iš-te</i>	<i>šat-til(la)/šatti-dil</i> <sup>1</sup>	-	-
Էրզատիվ	<i>iža-z̄</i>	<i>šie-z̄</i>	<i>yeše</i> (< <i>*yēs-šē</i> )	-
Մեռական	<i>šo-we</i>	-	-	-
Տրական	<i>šo-wa</i>	-	<i>šu/o-yuke</i> <sup>2</sup>	-
Դիրտկաիվ	<i>šū-da</i>	<i>š-až-uda</i>	-	-
Կոմիտատիվ	<i>šū-ra</i>	-	-	-
Էկվատիվ	<i>šū-ra</i>	-	-	-

1) Խոռոխերեն եզակի քվի արսոլյուտիվ դերանվան *-te* տարրը, քերև, համեմատելի է 1 դ. եզակի քվի *-l(ta)* ածանցավոր անձնական դերանվան հետ, իսկ նույն դեմքի հոգնակի արսոլյուտիվ դերանվան բաղկացուցիչ ճասն են կազմում *-ti* տարրը (որն, ըստ ամենայն հավանականության, նույնանուն է *iš-te* ձևի *-te* տարրի հետ) և 3 դ. հոգնակի քվի *-l(la)* ածանցավոր անձնական դերանունը:

երև *-ti* տարրը, իրոք, համադրելի է *-(ta)* դերանվան հետ, ապա գործ ունենք կրկնակի հավելադրության հետ. 1 դ. ինքնուրույն դերանուն *ša-* + 1 դ. եզակի քվի *-ti* + 1 դ. հոգնակի քվի *ti-l(la)* անձնական դերանվանական ածանցներ:

2) Ուրարտերեն տրական հոլովի դերանունը բաղկացած է 1 դ. անձնական դերանվան տրական հոլովի *šu/o-y(e)* (հնտ. խուռ. *šo-wa*) ձևից և *-uke* դեյկտիկ մասնիկից (հնտ. այս նույն տարրը մի շարք ցուցական դերանունների (*in-uka-ne*, *ik-uka-ne*), ինչպես նաև *-kay* պրեկատիվ իմաստ ունեցող ետադրության կազմում (*kay-uke*):

**Ղերանուն**

Ղերանուններին նվիրված գլխում քննարկվում են *անձնական, ստացական, ցուցական, անորոշ, հարարերական և հարցական* դերանունները:

**Անձնական դերանուններ**

Հայանի էին երկու կարգի անձնական դերանուններ՝ *ինքնուրույն և ածանցավոր*.

ա) *Ինքնուրույն դերանուններին*, որոնք գործածվում էին հիմնականում Լմֆատիկ իմաստով, հաստի էին դեմքի, քվի և հոլովման կարգերը:

1 դ. հիմքն էր (*i*)*s/z(V)*- խոռոխերենում և (*ye*)*š(u/o)*- ուրարտերենում, տե՛ս Աղյուսակ 2:

2 դ. հիմքը խոռոխերենում *fe-* էր, տե՛ս Աղյուսակ 3:

Աղյուսակ 3

	Խոռոխերեն	
	Եզակի ք.	Հոգնակի ք.
Աբսոլյուտիվ	<i>fe-</i>	<i>fe-l(a)</i> ,
Էրզատիվ	<i>fe-z̄</i>	<i>fe-z̄-uz̄</i>
Մեռական	<i>fe-we</i>	
Տրական	<i>fe-wa</i>	<i>feza</i> < <i>*fe-z̄(w)a</i>

Ուրարտերենում 2 դեմքի դերանունը վկայված չէ:

3 դեմքի խտտի-ուրարական \*man- դերանվանական հիմքը, ինչպես վերը նշվեց, նույնանուն է ցուցական դերանվանական հիմքի հետ, տե՛ս Աղյուսակ 4:

2 և 3 դեմքի հոգնակի էրզատիվ fe- $\bar{z}$ -u $\bar{z}$  և man- $\bar{z}$ -u $\bar{z}$  դերանունների համադրումը 1 դեմքի համապատասխան ձևի հետ (sie $\bar{z}$  ) բույլ է տալիս ենթադրել, որ վերջինս \*sie- $\bar{z}$ -u $\bar{z}$ -ի սղված ձևն է:

Աղյուսակ 4

	Խտտիերեն		Ուրարտերեն
	Եզակի ք.	Հոգնակի ք.	Եզակի ք.
Արտյուտիվ	man(n)e	mane-lla	mane
Էրզատիվ	manu- $\bar{z}$	man- $\bar{z}$ -u $\bar{z}$	
Տրական		man $\bar{z}$ a <*man- $\bar{z}$ -(w)a	
Բացառական	manu-dan		
Կոմիտատիվ	manu-ra	man- $\bar{z}$ -u-ra	
Էկվատիվ	manu- <i>nna</i>		

Ինչպես տեսնում ենք, հոգնակիակերտ միջոցների բաշխումը անձնական դերանուններում՝ -lla 3 դ. հոգնակի ածանցավոր դերանունը արտյուտիվ հոլովում և -a( $\bar{z}$ ) հոգնակիակերտ ածանցը մյուս հոլովներում, նույնն է, ինչ և գոյականների համակարգում:

Աղյուսակ 5

	Խտտիերեն		Ուրարտերեն	
	Եզակի ք.	Հոգնակի ք.	Եզակի ք.	Հոգնակի ք.
1 դ.	-t(ta)	- t/di+-l(la)	-de	-di+-le
2 դ.	-b/m(ma)*			
3 դ.	-b/m*, -0, -n(na)	-l(la)	-be, -0, -ne	

\*Խտտիերեն 2 և 3 դեմքի դերանունները, անկասկած, տարբերվում էին արտասանությամբ, սակայն սեպագրի բնօրինակը հնարավորությունները բույլ չեն տալիս պարզել, թե ինչպես:

բ) *Ածանցավոր անձնական դերանունների* (տե՛ս Աղյուսակ 5) միջոցով խտտիերենում արտահայտվում էին անանցողական բայի ենթական (սուրյեկաը) և անցողական բայի խնդիրը (օբյեկաը), այլ կերպ ասած, իրենց կատարած ֆունկցիայով այդ դերանունները համապատասխանում էին գոյականների և ինքնուրույն անձնական դերանունների արտյուտիվ հոլովին, այն տարբերությամբ, որ անձնական դերանվանական ածանցների համակարգում ուղիղ և անուղղակի խնդիրները չէին տարբերակվում (inu-tta-nin ...seniffuz tadiya ‘ինչպես որ եղբայրս սիրում է ինձ...’ ibid, I<sub>74-75</sub>, kuloza-tta-an ‘նա ինձ հաղորդեց’, Mit. IV<sub>5</sub>, seniffu(z)-tta-an subiamastēn ‘իմ եղբայրը բող ալիլացնի ինձ (համար), ibid, III<sub>71</sub>), մինչդեռ գոյականների և անձնական դերանունների համակարգում ուղիղ և անուղղակի խնդիրները արտահայտվում էին տարբեր հոլովածներով (ուղիղ խնդիրը արտյուտիվ, իսկ անուղղակի խնդիրը՝ արական կամ դիրեկտիվ հոլովներով), բացի վերը բննարկված փոքրաքիվ դեպքերից, երբ արտյուտիվի հոլովածները հանդես էին գալիս դիրեկտիվ հոլովի ֆունկցիայով:

Ուրարտերենում, ի տարբերություն խուռիերենից, վկայված է անուղղակի խնդիր իմաստով գործածված -me «ինձ» դերանվանական ածանցը. *šabiše kayuke suluššibe ... aru-me meše* “(նա) եկավ / հայանվեց իմ առաջ, ռոմեթս ընկավ ... ինձ աուրք ավեց’, ՄԿԻ 155 E<sub>54-55</sub>”:

Այս ածանցը, ըստ ամենայն հավանականության, հնդեվրոպական փոխառություն է<sup>21</sup>: Այն փաստից, որ անուղղակի խնդիր արտահայտող դերանունը ուրարտերենում փոխառյալ է, հեռու է, որ ուրարտերենին, ինչպես և խուռիերենին, սկզբնապես հատուկ չէր ուղիղ խնդիր : անուղղակի խնդիր տարբերակումը, իսկ այդ տարբերակման բացակայության օրինակները խուռիերենի հնագույն բարբառներից մեկում նաև գոյականական համակարգում, ինչպես վերը նշվեց, վկայում են այն մասին, որ խուռի-ուրարտերենի հնագույն շրջանում ուղիղ և անուղղակի խնդիրներները դիֆերենցված չէին:

3դ. -b/m դերանունը, որը վկայված է միայն հնագույն բարբառներում և անձնանուններում, ի տարբերություն մյուսներից, արտահայտում էր ոչ միայն անանցողական, այլև անցողական բայերի սուբյեկտը, բայց չէր գործածվում *man-* «լինել» վիճակի բայի հետ. *pašto-m* ‘կառուցեց’, *uso-b* ‘ծնեց (բերեց)’, *nahha-b* ‘նստեց’, բայց՝ *manne*: Այս փաստից եզրակացնում ենք, որ հնագույն շրջանում խուռի-ուրարտերենին հատուկ էր ոչ թե էրգատիվ լեզուներին բնորոշ անցողականություն : անանցողականություն, այլ ակտիվ տիպաբանության լեզուներին հատուկ գործողություն : վիճակ հակադրությունը, որի հետքերը նշմարվում են լեզվի արխայիկ բարբառներում: Ավելի ուշ բարբառներում գործողության սուբյեկտը արտահայտող -b/m դերանունը այլևս չէր գործածվում:

<sup>21</sup> Այս մասնիկի հավանականակապի մասին հնդեվրոպականի հետ տե՛ս. Г.Б. Джаукян, Взаимодействие индоевропейских, хуррито-урартских и кавказских языков, Ереван, 1967, с. 42.

Այս դերանվանական ցուցչի վերաբերյալ, սակայն, գոյություն ունի նաև այլ կարծիք<sup>22</sup>: Ըստ Վիլհելմի, խուռիերենն ուներ ոչ թե մեկ, այլ երկու տարբեր դերանվանական ածանցներ՝ -b և -m: Նրա կարծիքով, այդ ցուցիչներից առաջինը արտահայտում էր անանցողական և անախպաստիվ կառուցվածքի (տե՛ս էջ 37) բայերի սուբյեկտը, մինչդեռ երկրորդը երկբևեռ (bipolar) ձևորդ էր, որ համատեղում էր անցողական բայի 3դ. եզակի թվի սուբյեկտի (ագենսի) և 3 դ. եզակի թվի օբյեկտի (արացիենսի) իմաստները: Այս կարծիքը հայտնելիս, նա վկայակոչում է Դյակոնովին, որն Ուրկեշի արձանագրությունը վերլուծելիս, իրեն հատուկ խորաթափանցությամբ *pastum* ‘նա կառուցեց’ բայածևր համեմատել է ուրարտերենի անցողական բայերի 3 դ. եզակի թվի ձևերի հետ, որոնցում -ne ածանցը արտահայտում էր 3 դ. օբյեկտը, ոչ սուբյեկտը (*hau-ne* ‘նա վերցրեց’)<sup>23</sup>: Սակայն Դյակոնովը այդ համեմատությունն արել էր մինչև խուռի-սեթական բիլինգվալի ի հայտ գալը, որում -m և -b ածանցներով ձևերը գործածվում են զուգահեռաբար: Այդ ածանցների զուգահեռ գործածությունը հակասում է Վիլհելմի առաջարկած վերլուծությանը: Դժվար է համաձայնվել Վիլհելմի այդ կատակցությամբ առաջ քաշված այն փաստարկի հետ, որ անցողական բայածևրում -b ածանցի և անանցողականներում -m-ի գործածության փոքրաթիվ օրինակներից կարելի է եզրակացնել, որ այդպիսի գործածությունը գրչի սխալի հետևանք է: Մեր կարծիքով -b/m ածանցի նման բաշխումը (-m հիմնականում -o ձայնավորից և -b՝ a- և -i ձայնավորներից հետո) պայմանավորված էր նրան նախորդող բնակազմիչ ձայնավորով):

-m մասնիկի երկբևեռության ենթադրությունը չի հաստատվում նաև տիպաբանորեն. լինելով կցական ձևորդ, այդ մասնիկը չէր կարող

<sup>22</sup> G. Wilhelm, Zum Churritischen Verbalsystem, *Klaus Heger Festschrift zum 65. Geburtstag*, Heidelberg, 1992, p. 666; idem, Die Inschrift des Tisadal von Urkes, *Bibliotheca Mesopotamica* 26, Malibu, 1998, p. 131.

<sup>23</sup> И. М. Дьяконов, Языки древней Передней Азии, М., 1967, с. 443; նույնի, *Hurrisch und Urartaish*, München, 1971, p. 111.

միաժամանակ երկու տարբեր իմաստ արտահայտել (սուբյեկտ + օբյեկտ):

Ուրարտերենում *-be* դերանունը, ի տարբերություն խոտիերենի, հանդես է գալիս անանցողական բայի սուբյեկտի, իսկ *-ne-ն*՝ անցողական բայի օբյեկտի ֆունկցիայով. *nuna-be* “նա եկավ”, *ՄԿԻ, passim*; *h̄ao-ne* “նա վերցրեց”, *ibid, passim*:

Բերված փաստերը թույլ են տալիս վերականգնել խոտի-ուրարտական *\*-b/m* և *\*-n* դերանունները, որոնցից առաջինը, ի տարբերություն երկրորդից, ակտիվ գործողության սուբյեկտի ցուցիչն էր: Հետագու զարգացման ընթացքում խոտիերենը կորցնում է *-b/m* դերանունը, իսկ *-n(na)* դերանունը հանդես է գալիս անցողական բայի օբյեկտի/պացիենտի և անանցողական բայի սուբյեկտի իմաստով, թեև վերջինիս ներկայությունը նախադասության մեջ, կարծես թե, պարտադիր չէր. որոշակի դիրքերում նրան այդ դերում կարող էր փոխարինել նաև *-na/e-* դերանվանական տարրը (որն, ամենայն հավանականությամբ, *na*-ը խոտի-ուրարտական ցուցական դերանվան բաղադրիչ մասն է կազմում). *Keliyaššan* (< *Keliyaš-nna-an*) ... *tiwe andi kuloža* “Աելիան այս խոսքն ասաց”, *Mit. I*<sub>83</sub>; *adinia taže-n ittošta* ‘և սեհա նվերը գնաց (ուղարկվեց)’, նույն տեղում, *I*<sub>90</sub>; *Nimauriyaš* ... *taže abli tanoža* ‘Նիմաուրիան ... *abli* նվեր արեց’, նույն տեղում, *I*<sub>84-85</sub>; *inna-me-nin šeniffuwe ašti unetta* ... “և երբ եղբորս կինը գա...”, նույն տեղում, *III*<sub>21</sub>:

Այլ կերպ է ընթանում այդ դերանվան զարգացումը ուրարտերենում. *-be* գործողության սուբյեկտի ցուցիչը այստեղ չի վերանում, բայց նրա գործածության ոլորտը նեղանում է, սահմանափակվելով անանցողական բայի սուբյեկտի ոլորտով, մինչդեռ *-ne* դերանունը շարունակում է հանդես գալ իրեն հատուկ օբյեկտային (պացիենտի) ֆունկցիայով: *-be* դերանվան գործառնության այդպիսի զարգացումը հանգեցնում է նրան, որ ուրարտերենում անանցավոր անձնական դերանունների համակարգում փաստորեն ձևավորվում է անանցողական բայի սուբյեկտից տարբերվող հատուկ օբյեկտային

դերանուն՝ մի երևույթ, որ հատկանշական չէ էրզատիվ լեզուների համար և կարելի է բացատրել որպես նոմինատիվ լեզուներին հատուկ իննովացիա:

Մեզադառնալով խոտիերեն *-b/m* դերանվանը, նշենք, որ խոտի-իերական բիլինգվալյամ հոգնակի ենթակայի՝ հետ գործածված՝ են երակի *-b/m* մասնիկով բայաձևեր. *farini-na* (հոգնակի) *muži-b* (եզակի) *aršahi-na sukmušta-b* *fandarini-na-ma* *aki-b* *nehirna mallādaē-I uni-b* հոգնախմբը կարգի բերեցին<sup>24</sup>, մատուփակները ներս եկան, խոնարարները միսը ներս բերեցին, սկուտեղով (նրանք) բերեցին’, *Kbo XXXII 13 I*<sub>21-24</sub>:

Այս փաստից ելնելով, Է. Նոյը հետևություն է անում, որ *-b* դերանունը չէզոք էր թվի նկատմամբ<sup>25</sup>: Սակայն հաշվի առնելով.

ա) անանցավոր անձնական դերանունների մոբիլությունը (նրանք կարող էին միանալ ոչ միայն բային, այլև նախադասության որևէ այլ անդամին);

բ) հոգնակի *-I(a)* դերանվան անկայությունը այդ նախադասություններում;

գ) այն փաստը, որ հին Առաջավոր Ասիայի այլ լեզուներում նույնպես սուբյեկտի և բայի համաձայնությունը ըստ թվի շատ խիստ չէր և դրա քաղցրկայության դեպքերը հազվադեպ չէին (*iyenamain Maneš Keliyallan kadilleda* [եզակի] ‘այն, ինչ կասեն Մանեն և Աելիան’, *Mit. IV*<sub>21-23</sub>)<sup>26</sup>, կարելի է պնդել, որ *-b/m* դերանունը ոչ թե չէզոք էր թվի նկատմամբ, այլ որ խոտի-իերական բիլինգվայի խոտիերեն բարբառին հատուկ էր նախադասության այսպիսի կառուցվածք. գոյական *+ -lla/-na* (հոգնակի/ակերտ մասնիկներ) - բայ *+ -b/m* (եզակի):

<sup>24</sup> Այս քարգնանությունը լիովին չի համապատասխանում բիլինգվային, բերես, նրան ավելի մոտ է ռուսերեն “*пекари прибрались*” քարգնանությունը:

<sup>25</sup> E. Neu, Neue Wege im Hurritischen, *Akten des XXIII Deutschen Orientalistentages*, Würzburg, 1985, Ann. 15.

<sup>26</sup> Ամանատիպ երևույթի հանդիպում ենք նաև էլամերենում. *i-r* (եզակի) *ipsi-p* (հոգնակի), \**ip* *ipsi-p*-ի փոխարեն, տե՛ս ստորև:

Խոտիերենում 3 դեմքի -n(na) և -lla ածանցավոր դերանունները հանդես էին գալիս նաև հանգույցի դերում, կապելով ենթական անվանական ստորոգյալին. Tizadal enda-n Urkes “Տիժադալը Ուրկեշի բուրնն է’, Urk. 1-3; iyenamanin Manez Keliyallan kadilleda urha-lla-an ‘այն քաները/խոսքերը, որ Մանեն և Կելիան, կասեն, ճշմարիտ են’, Mit. IV 23:

Ուրարտերենում, ի տարբերություն խոտիերենից, -ne և -le դերանունները հանգույցի ֆունկցիայով չեն գործածվել կամ, համեմայն դեպս, վկայվաց չեն, իսկ հանգույցի դերում հանդես է եկել man- «լինել» բայը. manu Ispuine kurune ‘Իշպուինենն եզոր է’, ՄԿՄ 21<sub>12</sub>; <sup>URU</sup> X ... agunune manu “X քաղաքը ... ամրացված էր’, ibid., passim:

Ստացական դերանուններ

Ինչպես և անձնական դերանունները, ստացական դերանունները, երբեք տեսակի էին՝ *ինքնուրույն և ածանցավոր*:

ա) *Ինքնուրույն* ստացական դերանունները, ըստ էության, ինքնուրույն անձնական դերանունների սեռական հոլովի ձևերն են. “Megi fe-we tizav anaštikki “Մեզի, քո սիրտը<sup>27</sup> չի ուրախանա’, Kbo XXXII 15 I<sub>20-21</sub>:

բ) Ածանցավոր դերանունները ստացական հոդերն են, տես Աղյուսակ 6: Վերջիններս հանդես են գալիս գոյականի բառաձևում, զբաղեցնելով նույն դիրքը, ինչ և -ne հոդը (խոտ. šiyē-ne “զեաք’, šen-iffē ‘եղբայրս / եղբորս’, ašti-v ‘կինդ / կնոջդ’):

Ստացական հոդերին հաջորդող -až(-) հոգնակիակերտ ածանցը կապող էր վերաբերել թե՛ հատկացյալին, և թե՛ հատկացուցչին. սիւրի-y-až ‘նրանց կողմը’, Voc. IV<sub>17</sub>; attardiff-až ‘մեր նախնիները’, Mit. I<sub>8</sub>:

Ստացական դերանունների շարքում առանձնանում են

ա) շումերա-խոտիական բառացանկում վկայված 3 դ. եզակի թվի -de դերանունը 3 դ. հոգնակի թվի -iy-až ձևի կողքին՝ tizne-de ‘նրա սիրտը’, Voc. II<sub>28</sub>;

<sup>27</sup> Բառացիորեն. ‘քո սիրտ-դ’ (-v):

բ) խոտի-խեթական բիլինգվայում հանդիպող 2 դ. հոգնակի թվի -š/z դերանունը, որը, ի տարբերություն 1 և 2 դեմքի դերանուններից, կազմված չէ համապատասխան դեմքի եզակի թվի ստացական դերանունից և -až հոգնակիակերտ ածանցից՝ ede-š/zu-da feža “ձեր իսկ մոտ (բառ.՝ դեպի ձեր մարմինը-ձեզ), Kbo 32 19 I<sub>23</sub>:

Խոտիերենի հնագույն բարբառներում վկայված այս ձևույթները, հավանաբար, պետք է մեկնաբանել որպես լեզվի վաղ շրջանում հայանի, իսկ հետագայում կորսված անօտարելի պատկանելության քերականական կարգի քեկորներ: Իսկ քանի որ օտարելի : անօտարելի պատկանելության հակադրությունը հասուկ է ակաիվ ախպարանության լեզուներին<sup>28</sup>, այդ հակադրության հետքերը խոտիերենի վաղ բարբառներում վկայում են նրա սկզբնապես ակաիվ ախպարանության լեզու լինելու մասին (նմանատիպ երևույթի համոզիպում ենք նաև էլամերենում<sup>29</sup>, որը նույնպես ի հայտ է բերում ակաիվ ախպարանության լեզուներին բնորոշ մի շարք հատկանիշներ):

Աղյուսակ 6

	Խոտիերեն		Ուրարտերեն
	Եզակի թ.	Հոգնակի թ.	Եզակի թ. <sup>1</sup>
1դ.	-iffu-// -iffē	-iff-až	-uke (<*uv-ke) <sup>2</sup>
2դ.	-v	-š-	
3դ.	-ya-// -ye, -de	-iy-až	-ya-// -ye

1) Ուրարտերենում հոգնակի թվի ստացական դերանունները վկայված չեն:  
2) Այս դերանվանական ածանցը, ամենայն հավանականությամբ, բաղկացած է, \*-u-/-v- ստացական հոդից (հմտ. խոտ. -iffu) և -uke դեյկաիկ տարրից :

<sup>28</sup> Տե՛ս Դ. Ա. Климов, Типология языков активного строя, М., 1977, с. 148 слл.  
<sup>29</sup> Խոտը 1 դ. եզակի թվի -ta և 3 դ. եզակի թվի -e դերանվանական ածանցների մասին է, որոնք դուրս են մնում ստացականություն արտահայտող միջոցների հարացույցից, տես ստորև:



Յուզական դերանուններ

*Խուռիերենում* վկայված են հետևյալ ցուցական (դեյկաիկ) հիմքերը. man-, an-, and-, an-, ak/g-, ak-, iš-, al-:

*man-* հիմքը հանդես է գալիս նաև 3 դ. անձնական դերանվան ֆունկցիայով. mana «այս», mane «նա». mana šuene “այս ամենը”, Mit., passim:

*an-* և *an-* դերանունները տարբերվում են ըստ մատնանշվող առարկայի հեռավորության: Այս գույզի առաջին անդամը anne «այս» դերանունն է. anni-n zalamše hi[riar]i[h]he ... Taduḥeba-n manne “այս ոսկյա արծանը ... Տադուհեբան է”, Mit. I<sub>102-103</sub>; šeniifullan tive ane-na-numaman haḫaḫiwaen “(եթե որևէ մեկը վատ բաներ / խտրեր ասի իմ մասին...) թող իմ եղբայրը չլսի այդ խտրերը”, նույն տեղում, IV<sub>19-20</sub>:

Բացառված չէ, որ այս շարքը ոչ թե երկանդամ, այլ եռանդամ էր և ներառում էր նաև *ande* դերանունը, որն, ըստ երևույթին, զբաղեցնում էր այդ շարքում 3րդ տեղը. nale mannuwur manne tarḫuwane ande manne «(դա) այժ չէ, մարդ է, այն տղամարդն է...», KBo 32 14 Vs.I<sub>17-18</sub>:

Այս դերանունների վերաբերյալ գոյություն ունի մեկ այլ կարծիք<sup>30</sup>, ըստ որի ane և ande դերանունների տարբերությունը կայանում է նրանում, որ առաջինը արտահայտում էր տարածական, իսկ երկրորդը՝ անաֆորիկ/կատաֆորիկ դեյկաիս, հղելով տեքստում հիշատակված (անաֆորիկ) կամ հիշատակվելիք (կատաֆորիկ) առարկային կամ արտահայտությանը:

Այս տեսակետը, սակայն, հերքվում է annu-dan šu(w)ene-dan “այս բոլորի պատճառով” (Mit. III<sub>108</sub>) օրինակով, որտեղ ane դերանունը գործածված է ոչ թե տարածական, այլ անաֆորիկ իմաստով:

<sup>30</sup> G. Wilhelm, Die Inschrift auf der Statue der Tatu-Ḫeba and die hurritischen deiktischen Prenomina”, *Studi Micenei ed Egeo-anatolici* 24, 1984, 219.

*ak-* և *ak/g-* դերանունները հիմնականում գործածվում էին զուգորդված՝ փոխադարձ դերանունների իմաստով՝ «մեկը - մյուսին», «այս մեկը - այն մեկին»:

*ak/g-* դերանունը գույզ էր կազմում նաև հեռավոր դեյկաիս արտահայտող *iš-* դերանվան հետ՝ aga-we amudom eša-we-ma furudom “այս կողմի (արտավայրը) նա չզնաց, իսկ այն (կողմինը) չտեսավ, Kbo XXXII 14 Vs. I<sub>28-29</sub>.

*al-* դեյկաիկ հիմքը վկայված է խուռիերենի հին բարբառներից մեկում, emeni tašpi alle <sup>d</sup>Lubadagaḫ tašpuin “ով ոչնչացնի (տաճարը), նրան Լուրադազը թող ոչնչացնի”, Urk. 11-14.

*Ուրարտերենի* ցուցական դերանվանական հիմքերն են. man-, in-, ik- iš- և, հավանաբար, ak-:

*mane* դերանվան գործառությունը ուրարտերենում բացարձակորեն համընկնում է խուռիերեն *alle* դերանվան գործառության հետ. alūše ... tule (<\*turole) ... turenene ... DINGIR<sup>MES</sup> -še mane “ով ոչնչացնի ... նրան ստուվածները թող ոչնչացնեն”, YKH, passim.

*in-* «այս» հիմքը եռանդամ շարքի առաջին դիրքն էր զբաղեցնում: Այն հավաղված էր *ik-* «այդ» և *iš-* «այն» հիմքերին. alūše ye(y) inukane esinene šioleye ... ”ով որևէ բան այս տեղից տանի ...”, նույն տեղում, 127 VIII<sub>11</sub>; ikukane šale šišuḫane ḫuradinele welidove ‘այդ նույն սարում կրկին ես հավաքեցի զինվորներին’, YKH, 127 I<sub>5</sub>; ašgovle ... IV LUGAL<sup>MES</sup> inane aptine šuinia-ne ... [XIX] LUGAL<sup>MES</sup> išane aptine šuinia-ne “լճի այս կողմից 4 բազավոր զերեվարեցի, լճի այն կողմից՝ 19 բազավոր”, նույն տեղում, 266<sub>3-12</sub>:

Յուզական դերանվանական հիմքերը ուրարտերենում գործածվում են *-ane* և *-uke* ածանցների զուգակցությամբ, որոնք, անշուշտ, նույնպես դեյկաիկ իմաստ ունեն. in-ane, in-uka-ne, ik-uka-ne, iš-ane: *-ane* ածանցը պարունակում է նույն տարրը, ինչ և *-ne* որոշիչ հոդը և *-ine* ցուցական դերանունը, իսկ *-uke* ածանցը, որը վկայված է նաև 1 դ. անձնական դերանվան (տե՛ս Աղյուսակ 6) և *-uke*(<\*-uv-ke) ստացական հոդի

կազմում, համեմատելի է ուրարտերեն *ik-* և խուռիերեն *ak - / ak/g-* դերանունների *-k* տարրի հետ, հմտ. հայերենի *այս նույն, այդ նույն*, ֆրանսերենի *celui-ci, celui-là* դերանունները:

Ուրարտերենում ևս հայտնի էր *al-* դեյակիկ դերանվանական հիմքը, սակայն, ի տարբերություն խուռիերենից, այստեղ այն վկայված է ոչ թե ցուցական, այլ ցուցական-հարաբերական դերանվան իմաստով. *ale* [UDU SISKUR<sup>MES</sup>] *zadove NAPHARU URU* Ardeneye *arove* “այն գոհերը, որ ես մատուցեցի, բոլորը սվեցի Արդիհնիին”, ՄԿԻ 264<sub>22</sub>; *alu-še* (երգ.) *tioleye ... 'ով (որ) սաի ...'*, նույն տեղում, *passim*:

Այս նույն դերանունը, ըստ Գյակոնովի ներածում էր ուղիղ խոսքը<sup>31</sup>: Ուղիղ խոսքից առաջ դրվող *ale* ձևի նման մեկնաբանությամբ մերժվում է ուրարտագիտության մեջ ընդունված այն կարծիքը, ըստ որի ուղիղ խոսքից առաջ դրվող *PN-še* *ale* արտահայտությունը ունի ‘այսինչը ասում է’ նշանակությունը: Մակայն այն փաստը, որ վերոհիշյալ *ale* բառի հետ օգտագործված գոյականը դրվում էր էրգասիվ հորովով (վերջինս, ինչպես հայտնի է, բացառապես անցողական բայի ենթակայի հորովն է), ինչպես նաև այն, որ խուռիերենից մեզ հայտնի է *al-* ‘խոսել’ բայը, խոսում են *ale-*ի բայական ձև լինելու օգտին (այդ ձևի վերլուծությունը տե՛ս ստորև):

#### Անորոշ դերանուններ

*Խուռիերենի* անորոշ դերանվանական հիմքերն են *awe-* և *iyē/a(-)*. *šeniffudaman awenne-nin*<sup>32</sup> *tiwe šurve iya-mmaman kadillewa šowenie ediffuwe* ‘եթև որևէ մեկը եղբորս որևէ վատ խոսք սաի իմ մասին’, Mit. IV<sub>17-18</sub>; *iyē-n ole tiwe 'որևէ այլ բան/խոսք'*, նույն տեղում, II<sub>79</sub>:

<sup>31</sup> I.M. Diakonoff, Hurrisch und Urartaisch, p.110-111.

<sup>32</sup> Էրգատիվ հորովի վերջավորության բացակայությունը այս և նման նախադասություններում, հավանաբար, պայմանավորված է բայի ձևով. *-ewa* ածանցով անիրական եղանակի բայի ենթական դրվում է արտոյուտիվ հորովով, անկախ բայի բնույթից:

Ուրարտերենում համապատասխանաբար ունենք *ay(e)-* (խուռիերենի միջնայնավորական *w-*ին ուրարտերենում համապատասխանում է *y* հնչյունը) և *yey* դերանունները. *aluše ay-ne-ye tioleye ... 'ով որևէ մեկին սաի ...'*; *aluše yey inane arniušinane lakudoleye ... 'ով որևէ մի բան այս գործերից / արածներից վչացնի ...'*, ՄԿԻ, *passim*:

Անորոշ դերանվան իմաստով ուրարտերենում վկայված է նաև վերը քննարկված *al-* դերանվանական հիմքը *-ke* ածանցով (*aleke* «ոմն / ոմանր»), *aleke zašgove aleke šehere agove* ‘ոմանց սպանեցի, ոմանց էլ կենդանի տարա/բշեցի’, նույն տեղում, *passim*:

*al-* հիմքը վկայված է նաև *-uke* ածանցով (հմտ. այդ նույն ածանցով կազմված *inuke* և *ikuke* դերանունները), ցավոք, անհասկանալի կոնսուստում:

#### Հարաբերական դերանուններ

*Խուռիերենում* հարաբերական դերանվան իմաստով հանդես է գալիս *iyē/a-* հիմքը արտոյուտիվ շարքի եզակի (*-me-*) կամ հոգնակի (*-lle-*) անձնական դերանվանական ձևույթների և *-nin* մասնիկի համակցությամբ (*iyē-me-nin, iya-lle-nin*). *iyē-me-nin* Keliyaž Maneššan *kuleda* “ինչ որ Կելիան և Մանեն ասեն”, Mit. IV<sub>27</sub>; *iyē-na-ma-nin* Manež Keliyallan *kadilleda* ‘ինչեր որ Կելիան և Մանեն ասեն’, նույն տեղում, IV<sub>21</sub>:

Ուշագրավ է, որ եզակի թվի *-n(na)* ածանցավոր անձնական դերանվան փոխարեն այստեղ հանդես է գալիս մեկ այլ մասնիկ (*-me-*), որը, հավանաբար, ծագում է *mane* ցուցական դերանունից:

*Ուրարտերենում* հարաբերական դերանվան ֆունկցիայով հանդես է գալիս *al-* ցուցական դերանվանական հիմքը: Պետք է նշել, որ սա ցուցական դերանուն - հարաբերական դերանուն անցման միակ դեպքը է խուռի-ուրարտերենում (տե՛ս էջ 17):

### Հարցական դերանուններ

Խուռիերենում վկայված է միայն *awe* «ո՞վ» հարցական դերանունը, իսկ ուրարտերենում հարցական դերանուններ ընդհանրապես վկայված չեն: Մակայն հաշվի առնելով, որ աշխարհի շատ լեզուներում հարաբերական և անորոշ դերանունները ծագում են հարցականներից և որ Խուռիերենի անորոշ և հարաբերական, իսկ ուրարտերենի անորոշ դերանունները կազմված են \**aw/ye-* և \**iye-* հիմքերից, Խուռի-ուրարտերենում կարելի է վերականգնել \**aw/ye* «ո՞վ» և \**iye* «ի՞նչ» դերանունները:

Խուռիերենում *inna-* «երբ (որ)» և *inna-mamam* «երբևէ» դերանվանական մակբայների հիման վրա կարելի է վերականգնել *inna-* «ե՞րբ», իսկ ուրարտերենում *oye a(y)se(y)* «երբեք» Ժխտական մակբայի և *aše* «երբ (որ)» շաղկապի հիման վրա՝ *aše* «ե՞րբ» հարցական մակբայը:

### Անորոշ և որոշյալ դերանուններ

Խուռիերենում և ուրարտերենում վկայված են *na* և *ole* «այլ» անորոշ և *šue* «բոլոր» որոշյալ դերանունները:

### Անդրադարձ դերանուններ

Գերանունների այս դասը, ինչպես և պետք էր սպասել, Խուռիերենում և ուրարտերենում վկայված չէ (անդրադարձ դերանունները հատուկ չեն էրգատիվ լեզուներին): Խուռիերենում անդրադարձ դերանվան իմաստով կիրառվում էր *e/ide* «մարմին» գոյականը ստացական հոդի համակցությամբ. *elamenedan ugoia idiv-an parrana*՝ երդումից վախեցիր, *ինքդ քեզ* (= մարմինդ) փրկիր՝, RS 15.10<sub>6-9</sub>:

Ժխտական դերանունների դասը Խուռիերենում և ուրարտերենում բացակայում էր:

### Ընդ

Խուռի-ուրարտական բային հատուկ էին *եղանակի*, *ժամանակի*, *անցողականության* : *անանցողականության*, *դեմքի* և *թվի* քերականական կարգերը:

Սահմանական եղանակի բայը ուներ երկու խոնարհում. էրգատիվ և արտոյտտիվ:

*Էրգատիվ* բացառապես անցողական բայերին հատուկ խոնարհման վերջավորությունները, ծագում են ստացական հոդերից (տե՛ս Աղյուսակ 7), բացի 3 դեմքի հոգնակի ձևից, որը կազմվում էր *-it/d-* բայական հոգնակիակերտ ածանցի միջոցով:

*Արտոյտտիվ* խոնարհումը կազմվում էր բնակազմիչ ձայնավորներով ավարտվող բայի հիմքին անձնական դերանվանական ածանցների (տե՛ս Աղյուսակ 5) կցումով:

Խուռիերենում արտոյտտիվ խոնարհումը հատուկ էր

ա) անանցողական բայերին;

բ) անանցողականացված (դերանգիտիվացված, սուբյեկտամետ, անտիպասսիվ կառուցվածքի) բայերին, այսինքն իմաստով անցողական բայերին, որոնց ուղիղ խնդիրը նախադասության մեջ չէր արտահայտված;

գ) անցողական բայերի 3 դ. ձևերին արխայիկ բարբառներում:

Վերջիններս, անշուշտ, մնացուկային (ռեղիկտային) ձևեր են, պահպանված լեզվի զարգացման նախաէրգատիվ փուլից, երբ բայերը դեռ հակադրված չէին անցողականության : անանցողականության հատկանիշով: Մեր այս կարծիքը հաստատվում է այն փաստով, որ այդ բարբառներում անցողական բայերի *-b* սուբյեկտային դերանվանական ածանցը նույնանում է անանցողական բայերի սուբյեկտային ածանցի հետ և, հետևաբար, կատարում է գործողության սուբյեկտի ֆունկցիա, անկախ բայի անցողականությունից : անանցողականությունից:

Աղյուսակ 7

		Խտուիերեն		Ուրարտերեն	
		Քայական երգաստիվ վերջ.	Մտացական հոդ	Քայական երգաստիվ վերջ.	Մտաց. հոդ
Եզ.	1 դ.	-af(fu)/-o	-iff(u)	-ve	-v-ke
	2 դ.	-o/-v	-v		
	3 դ.	-(y)a	-ye/a(-)	-0-a	-ya/e(-)
Հոգն.	1 դ.	-av-za	-iff-až		
	2 դ.	-ašsu	-šsi-		
	3 դ.	-id(o)-(a)	-iy-až	-it-o-0	

Քացի վերը քննարկված սահմանական եղանակի ձևերից, խտուիերենի մեկ այլ արխայիկ բարբառում (խտուի-շումերական բիլինգվալում) վկայված են -VZV-ով վերջավորվող ձևեր, որոնք համապատասխանում են շումերական տարբերակի 3 դ. եզակի թվի կատարյալ կերպի բայերին. շում. [in]-gar = խտու. ki-ba-šū “նա դրեց”, RS 8+11 II<sub>31</sub>: Շումերական 3դ. հոգնակի թվի բայաձևերին նույն տեքստում համապատասխանում են -VZV-IV վերջավորություն ունեցող ձևեր. շում. in-gar-e-meš = խտու. II(=ki-ba)-ša-[la] “նրանք դրեցին”, նույն տեղում, I<sub>32</sub> :

Նույն այդ տեքստում վկայված են նաև -VZV-te վերջավորություն ունեցող բայաձևեր, որոնց, ի տարբերություն մյուս բոլոր ձևերից, շումերական տարբերակում համապատասխանում են աս-նախածանցով բայեր՝ շում. mu-un-ru = խտու. bi-šū-šū-te ‘նա վորեց’, նույն տեղում, III<sub>16</sub>: Որևէ օրինակաբանություն վերջավորությունների

ձայնավորների գործածության մեջ չի նկատվում: Ամենայն հավանականությամբ, այդ ձայնավորներից երկրորդը (°) չի արտասանվել<sup>33</sup>:

-š/z տարրը պարունակող սահմանական եղանակի բայաձևեր, քեև փոքր թվով, բայց վկայված են նաև անձնանուն-նախադասություններում (Hais-Tessob): Այդ տարրի նշանակությունը չի բացահայտված: Սակայն այն փաստը, որ -š/z-ով ձևերը իրենց կազմությամբ և իմաստով համեմատելի են արխայիկ բարբառների -b-ով վերջացող ձևերի հետ, թույլ է ապիս ենթադրել, որ համեմատելի են նաև -b դերանվան և -š/z մասնիկի ֆունկցիաները:

Իսկ բանի որ անձնական դերանվանական ածանցներին հատուկ էր ոչ միայն դիմորոշ, այլև հարաբերակցական ֆունկցիա (նրանք հարաբերակցում էին ենթական ստորոգյալի հետ), -š/z<sup>34</sup> մասնիկին կարելի է վերագրել եթե ոչ դիմորոշ, ապա, առնվազն, հարաբերակցական իմաստ:

-š/z տարրը, հավանաբար, նույնանուն է անիրական եղանակի որոշ ձևերում հանդիպող -š/z մասնիկի հետ (...-dilla-... pīsošt-ae-ž “թող մենք ... ուրախանանք”, Mit.I<sub>80</sub>), ինչպես և շումերա-խտուիական բիլինգվալի -VZV-IV հոգնակի վերջավորությունը՝ անիրական եղանակի ittai-ža-lla-«թող նրանք գնան» ձևի -ža-lla վերջավորության հետ:

Ուշագրավ են նաև բիլինգվալի -VZV-te-ով վերջավորվող ձևերը, որոնք, ինչպես վերը նշվեց, համապատասխանում են շումերական աս-նախածանցով բայաձևերին: Ելնելով այն փաստից, որ շումերերենի աս-նախածանցը արտահայտում էր գործողության ուղղվածությունը դեպի խոսողը<sup>35</sup>, խտուիերենի քննարկվող վերջավորության -te մասնիկը

<sup>33</sup> Ստրագրում, քեև այն ուներ CVC և VC տիպի նշաններ, հազվադեպ չէր CV տիպի նշանների օգտագործումը փակ վանկեր արտահայտելու համար:

<sup>34</sup> Ամենայն հավանականությամբ, -š/z մասնիկը ծագումով կապված է խտուիերեն -šse հարաբերակցական մասնիկի հետ (տե՛ս ստորև), որի միջոցով երկրորդական նախադասության բայը գոյականացվում է համա-ձայնեցվում էր անտեցեղենի հետ:

<sup>35</sup> Հմտ., օրինակ, И. Т. Канева, Шумерский язык. Санкт-Петербург, 1996, с.111-112.

կարելի է նույնացնել I դ. եզակի բվի անձնական դերանվանական -tta ածանցի հետ, աե՛ս Աղյուսակ 5:

Ինչպես վերը նշվեց, արտյուտիվ խոնարհման վերջավորությունները կցվում էին -a, -i, -o, -u, -i/e թեմատիկ բնակազմիչ ձայնավորներով ավարտվող բայի հիմքին.

-a ձայնավորը հատուկ էր անանցողական բայերին. սո-a «նա գալիս է», Mit. II<sub>14</sub>;

-i ձայնավորը դետրանգիտիվացված (սուբյեկտամետ) բայերի ցուցիչն էր. սցսլգար-i “նա խոնարհվեց”, Kbo 32 15 IV<sub>10</sub>;

-o<sup>36</sup> ձայնավորը արտահայտում էր անցողականություն. pašt-o-m «նա կառուցեց», Urk. 6;

-u-ն և -i/e-ն վիճակի բայերի ցուցիչներն էին. առաջինը հանդես էր գալիս բայի ժխտական ձևերում, իսկ երկրորդը՝ հաստատական. manni/e «նա է, նա կա», man-u-kk-u «չէ, ոչ»:

-a և -i բնակազմիչ ձայնավորները հանդիպում են խոռիերենի բոլոր բարբառներում, -o ձայնավորը վկայված է միայն արխայիկ բարբառներում, որոնցում անցողական բայերին բնորոշ էրգատիվ խոնարհման կողքին (1 և 2դ.) վկայված են անցողական բայերի արտյուտիվ խոնարհման դեպքեր (3 դ.), մի վաստ, որ կարելի է մեկնել որպես նախաէրգատիվ (ակտիվ) ախարբանության հետք խոռիերենում:

-u ձայնավորը վկայված է որոշ անձնանուն-նախադասություններում, հավանաբար, նաև, արխայիկ բարբառներում -u-ով վերջացող որոշ բայաձևերում, որոնց նշանակությունը, ցավոք, պարզ չէ:

Վիճակի բայերում վկայված -i (հավանաբար, [e] կամ [ɛ]) ձայնավորը, անշուշտ, տարբերվում էր դետրանգիտիվացված բայերի -i ձայնավորից: Դրա ապացույցն է այն փաստը, որ դետրանգիտիվացված բայերը ժխտող -ikki ձևույթը (hānašt-ikki «չի ծնի», RS

<sup>36</sup> Խոռի-խեթական բիլինգվայում արտահայտվում էր U նշանով, ի տարբերություն u ձայնավորից, որը գրվում էր U:

15.10<sub>9</sub>) տարբերվում է վիճակի բայերը ժխտող -ukku (tupp-ukku «չկա», Mit. III<sub>45</sub>) ձևույթից: Մյուս կողմից, այն հանգամանքը, որ նույն այդ -ukku վերջավորությամբ ժխտվում են նաև անանցողական բայերը (սո-ukka-lla<sup>37</sup> «չեն գալիս», Mit. I<sub>3</sub>), հաստատում է այն կարծիքը, որ վիճակի բայերի քերականական կարգը խոռի-ուրարտերենում վերապրուկային (ռելիկտային) է և միաձուլվում է անանցողական բայերի հետ:

Ուրարտերենի բային հատուկ -a, -i/-ia/-io, -o և -u բնակազմիչ ձայնավորները համեմատելի են խոռիերենի համապատասխան ձայնավորների հետ.

-a ձայնավորը անանցողական բայերի ցուցիչն էր. nun-a-be “զնաց, անցավ”, YKH. 155 A<sub>11-12</sub>;

-o-ն՝ անցողական<sup>38</sup> բայերի, šidišt-o-všē “կառուցեցինք”, նույն տեղում, I 8<sub>9</sub> 25, 41;

-u-ն վիճակի ցուցիչն էր, վկայված է manu «է/էր» բայի կազմում՝ agunune manu ‘ամբացված էր’, նույն տեղում, passim;

-i- ձայնավորը միջին սեռի ցուցիչն էր. kulu(y)ars-i- ‘վախչել / վախտասի մատնվել’;

-ia- ձևույթը, ակնհայտորեն, կազմված է միջին սեռի / դետրանգիտիվացված բայերի -i և անանցողականության -a ցուցիչների համադրությամբ. haš-ia-l-me ‘նրանք ինձ լսեցին / ականջ դրեցին’, նույն տեղում, passim;

-io- ցուցիչը, ինչպես և -ia-ն, բաղկացած էր երկու բաղադրիչ տարրերից՝ միջին սեռի -i և անցողականության -o ցուցիչներից և, անշուշտ, միջին սեռի իմաստ էր արտահայտում. teš-io-ne “նա կառուցեց (իր համար/իր օգտին)”<sup>39</sup>:

<sup>37</sup> -ukku - -ukka- անցումը պայմանավորված է -lla դերանվան ներկայությամբ:  
<sup>38</sup> Մինչև խոռի-խեթական բիլինգվայի հայտնաբերումը (սե՛ս ծանոթագրություն 34) այս ցուցիչը բերեցվում էր u, իսկ վիճակի ցուցիչը՝ -o:  
<sup>39</sup> В. М. Сальвини, Уточнения двух урартских надписей в Иранском Азербайджане, Древний Восток и мировая культура, М., 1981, с.71.

Սակայն ուրարտերենի խոնարհումը դրսևորում է որոշ տարբերություններ խառիերենի համեմատությամբ. -o- անցողականության ցուցիչը խառիերենում հասուկ էր միայն արտոյուտիվ խոնարհմանը և, հետևաբար, չէր պահպանվել այն բարբառներում, որոնցում անցողական բայերը լրիվ դուրս էին մղվել արտոյուտիվ խոնարհման ոլորտից: Ուրարտերենում, ի տարբերություն խառիերենից, անցողական բայերը չէին խոնարհվում ըստ արտոյուտիվ խոնարհման, սակայն -o- անցողականության ցուցիչը առկա էր էրզատիվ խոնարհման բայաձևերում:

Վերը շարադրվածից հետևում է, որ խառի-ուրարտերեն բայի բնակազմիչ ձայնավորները բաշխվել են հետևյալ կերպ. \*-o- անցողական, \*-i- սուբյեկտամետ (միջին սեռի), \*-a- անանցողական գործողության ցուցիչներ և \*-u- վիճակի ցուցիչ:

Ակնհայտ է, որ լեզվի ակտիվ փուլում \*-o- ձայնավորը հանդես է եկել կենտրոնախույս, իսկ \*-i-ն՝ կենտրոնամետ վերսիայի ցուցիչների դերում: Կենտրոնամետ և կենտրոնախույս վերսիայի հակադրությունը, ինչպես հայտնի է, հասուկ է ակտիվ սիպարանության լեզուներին<sup>40</sup>. առաջինը արտահայտում է գործողության տարածումը սուբյեկտից դուրս և համեմատելի է անցողական բայերի հետ, իսկ երկրորդը՝ գործողության ամփոփվածությունը սուբյեկտի ներսում և իմաստով մոտ է հնդեվրոպական լեզուների միջին սեռի բայերին: Պատահական չէ, որ խառիերենի և ուրարտերենի -i ածանցով բայաձևերից շատերը քարզմանվում են տուերենի անդրադարձ -ся մասնիկը պարունակող բայերով. խոռ. himzathož-i “она подпоясалась”, Kbo 32 13 I<sub>10</sub>; ուր. haš-ia-l(e)-me “они прислушались ко мне”, УКН, passim.

\*-a ձայնավորը, ըստ երևույթին, շարժման բայերի ցուցիչն էր:

Հետագայում՝ խառիերենի և ուրարտերենի էրզատիվ փուլում, կենտրոնախույս վերսիայի բայերը վերաիմաստավորվեցին անցողա-

կան բայերի, որոնց հասուկ էր էրզատիվ խոնարհումը, և որոնք հակադրվում էին ոչ-անցողական (արտոյուտիվ) խոնարհման բայերին: Վերջիններս բաժանվում էին հետևյալ խմբերի. օբյեկտազուրկ (սուբյեկտամետ) \*-i ցուցիչով, շարժման \*-a ցուցիչով և վիճակի \*-i/e և -u ցուցիչով:

#### Ժամանակ

*խառիերենում* ժամանակի քերականական կարգը արտահայտվում էր հետևյալ ածանցների միջոցով. -ož-(անցյալ ժամանակ), -0-(ներկա), -ed-(ապառնի):

Լեզվի ուշ բարբառներում այդ ձևայինները վկայված են և՛ էրզատիվ, և՛ արտոյուտիվ խոնարհման բայաձևերի հետ. haž-ož-av «ես լսեցի», pišand-ož-i-tta- «ես ուրախացա», un-0-a «նա գալիս է», tad-0-av «ես սիրում եմ», kad-ed-av «ես կասեմ», un-ed-t-a «նա կգա»: Սակայն արխայիկ բարբառներում, որոնց հասուկ էր 3 դեմքի գործողության սուբյեկտի -b/m ցուցիչը, այդ ձևայինները հանդիպում են միայն էրզատիվ խոնարհման բայաձևերում, մինչդեռ արտոյուտիվ խոնարհման ձևերում ժամանակների տարբերակում չի նկատվում. naw-a ‘նա արածում է’, Kbo 32 14 I<sub>26</sub>; nahh-a-b ‘նա նստեց’, նույն տեղում, 13 և.

Այս առումով որոշ նմանություն է նկատվում խառիերենի վաղ բարբառների արտոյուտիվ խոնարհման ձևերի և ուրարտերեն բայի միջև. ուրարտերենում բացակայում էր անցյալ ժամանակի -oz ցուցիչը, իսկ ապառնի ժամանակը արտահայտվում էր անիրական եղանակների ձևերով (վերջիններիս կազմի մեջ երբեմն մտնում էր -ed- ածանցը, որը, ինչպես վերը նշվեց, խառիերեն բայի ապառնի ժամանակի ցուցիչն էր)՝ hja-o-ve ‘ես վերցրեցի’, УКН, passim; nun-a-de ‘ես եկա’, նույն տեղում, 266<sub>15</sub>; aše pile nik-ed-ule “երբ ջրանցք լցվի / ջրանցքի (ջուրը) ավերից դուրս գա’, նույն տեղում, 281<sub>17</sub>:

<sup>40</sup> Г. А. Климов, Типология языков активного строя, М. 1977, с. 141.

Ներկա ժամանակի ձևեր են ուրարտերենում, հավանաբար, *ale* (<\**al-ya?*) «ասում է», *tiyane* (<\**tiy-ya-ne?*)<sup>41</sup>, նույն իմաստով, ուղիղ խոսքը ներածող բանաձևերում. *İsruineše ale / alye* 'Իսպուիինեն ասում է', ՄԿԽ, *passim*; *Minuaše ... tiya-ne* 'Մինուան ... ասում է, նույն տեղում, 100<sub>3</sub>: Այս ձևերը համեմատելի են խառիերենի էրգասիվ խոնարհման 3 դ. ներկա ժամանակի ձևերի հետ (*kad-ya* «նա սիրում է»):

Եթե վերոհիշյալ ձևերի մակնաբանությունը որպես էրգասիվ խոնարհման ներկա ժամանակի ձևեր ճիշտ է, կարելի է եզրակացնել, որ ուրարտերենում -o- անցողական բայերի ցուցիչը փաստորեն վերահմաստավորվել էր, ստանձնելով անցյալ ժամանակի ցուցիչ դերը, ի հակադրություն ներկա ժամանակի ձևերի, որոնցում այն բացակայում էր:

Վերը շարադրվածից հետևում է, որ խառի-ուրարտերենում արտյուտիվ խոնարհման համակարգում, այսինքն այն հատվածում, որը ձևավորվել էր լեզվի զարգացման դեռ ակտիվ փուլում, ժամանակի քերականական կարգը հայանի չէր:

Այն ձևավորվեց միայն հաջորդ, էրգասիվ փուլում, նախ, անցողական (էրգասիվ) խոնարհման շրջանակներում, իսկ ապա, խառիերենի ուշ բարբառներում (բայց ոչ ուրարտերենում) տարածվեց նաև արտյուտիվ խոնարհման վրա:

Այս պատկերը միանգամայն կանխագուշակելի էր, եթե հաշվի առնենք, որ ակտիվ տիպաբանության լեզուներին ժամանակի քերականական կարգը բնորոշ չէ<sup>42</sup>:

### Սեռ

Սեռի քերականական կարգը իր ակտիվ (ներգործական) : պասսիվ (կրավորական) հակադրությամբ, որը հատկանշական է նոմինատիվ լեզուների համար, բայց բնորոշ չէ այլ տիպաբանության լեզուներին,

հայանի չէր խառի-ուրարտերենի սահմանական եղանակի բային, սակայն նշմարվում է դերբայական համակարգում, ինչպես նաև լրվական / հորդորական բայաձևերում, որոնցում առկա է -u- վիճակի ցուցիչը. *kir-u-n(na)* 'թող նա ազատվի (թող նրան ազատեն)', *KB* 32 15 IV<sub>2,3</sub>; *pind-u-n* 'թող նա (հետ) ուղարկվի ( թող նրան ուղարկեն)', նույն տեղում, IV<sub>6</sub>; *aše ulde teš-u-l-e* *GU*D III *UDU* *Haldiye urb-u-l-i/e-ne* 'երբ այգին հասնի, (1) ցուլ (և) 3 ոչխար Խալդի (ասածուն) պետք է գոհարելուն (թող գոհարեն)', ՄԿԽ 65<sub>24-25</sub>:

Սակայն սկնհայա է, որ բերված օրինակներում ոչ թե տեղի է ունեցել սուբյեկտի և օբյեկտի դերերի փոփոխություն (ինչը հատկանշական է պասսիվ կառուցվածքի նախադասությունների համար), այլ պարզապես բաց է թողնված արամաբանական սուբյեկտը:

### Անիրական եղանակներ

Անիրական եղանակները խառիերենում և ուրարտերենում կազմվում էին -i/e (խառիերենում նաև -u և -a)<sup>43</sup>, ինչպես նաև -ai/e և -cwa (խառ.)/-a (ուրարտ.) ցուցիչներով, որոնք կարող էին գուգորդվել այդ ձևայիններից նախորդող -l(l) ածանցի հետ. խառ. *ar-i/e* 'տու՛ր' *Mit.* I<sub>5</sub>; *kud-u* 'թող ընկնի', *Kbo* 32 14 I<sub>58</sub>; ...-tta... *haž-i-l-i/e* 'թող լսեմ/կուզեի լսել', *Mit.* IV<sub>43</sub>; *šuramašt-i/e-n* 'թող արագացնի', *Mit.* IV<sub>51</sub>; *itt-ai-žā-lla-* 'որպեսզի զան', *Mit.* IV<sub>52</sub>; *kad-i-ll-ewa* 'եթե որևէ մեկը ասի / ցանկանա ասել', *Mit.* IV<sub>18</sub>; ուր. *ul-i/e* 'զնա', ՄԿԽ 169<sub>23</sub>; *mani/e-ne* 'թող լինի', ՄԿԽ 93<sub>4</sub>; *urb-u-l-i/e-ne* 'թող մոքքվի', ՄԿԽ 25<sub>4</sub>; *aš-o-l-a* (<*ae?*)<-*ve* 'ես պետք է թողնեի', ՄԿԽ 155 A<sub>12</sub>; *ha-o-l-eye* 'եթե վերցնի', ՄԿԽ 63<sub>10</sub>:

Ավելի մանրամասն տվյալներ անիրական եղանակների թվի և գործածության վերաբերյալ առայժմ չի հաջողվում բացահայտել:

<sup>41</sup> Այս երկու ձևերը տարբերվում են իրարից օբյեկտային դերանվանական -ne մասնիկի առկայությամբ (*tiy-ya-ne*) / բացակայությամբ (*al-ye*):

<sup>42</sup> Տե՛ս Գ. Ա. Климов, *Типология...*, с.144-145.

<sup>43</sup> Վերջիններս, ինչպես ցույց է տվել Վիլիելմը (*"Древний Восток"* 5, Ереван, 1988, с.113), նույնանում են բայի բնակազմիչ ձայնավորների հետ:

### Ժխտական ձևորդներ

*Խուռիերեն* բայում ժխտումը արտահայտվում էր հետևյալ բայական ածանցների միջոցով.

-kk- ածանցը ժխտում էր արտոյտաիվ խոնարհման բայերը: Այն վկայված է երկու տարբերակով՝ -ikki և -ukku (> -ukka- անձնական դերանվանական ածանցներից առաջ): Առաջինի միջոցով ժխտվում էին -i բնակազմիչ ձայնավորով բայերը, իսկ երկրորդով՝ -a և -i/e (բացի խուռի-խեթական բիլինգվայից, տե՛ս ստորև) . an-ikki “չի ուրախանում”, Kbo 32 15 I<sub>22</sub>; an-ukku-lla- “նրանք չեն գալիս” Mit. I<sub>3</sub>; tupp-ukku ‘չկա’, Mit. III<sub>45</sub>:

-w(a)-/ma- ածանցը վկայված է էրզատիվ խոնարհման և անիբական եղանակների բայաձևերում. f/pal-ya-ma “նա չգիտի”, Voc. I<sub>8</sub>; haṣāz-i-wa-i/e-n ‘թող նա չլսի’, Mit. IV<sub>20,100</sub>: Ամենայն հավանականությամբ, նույն այդ մասնիկը թարգմանված է նաև խուռի-խեթական բիլինգվայում վկայված manubur (<\*manu-w-ur) «չկա, չէ» ձևում<sup>44</sup> -b գրության ետևում:

Խուռի-խեթական բիլինգվայում հանդիպող -ud- (թե՞ -du-) ածանցը վկայված է -o բնակազմիչ ձայնավորով ձևերի կազմում (furu/odu/omu): -d- տարրը վկայված է նաև շումերա-խուռիական բառարանում շումերերեն nu-ba-n-sum «նա չավեց» ժխտական բայաձևին համապատասխանող ediladi/e (Voc. I<sub>28</sub>) ձևում, որը, սակայն, չափազանց անհասկանալի է որևէ եզրակացություն անելու համար:

*Ուրարտերենում*, ի տարբերություն խուռիերենից, ժխտումն արտահայտվում էր ոչ թե բայական ածանցների, այլ ժխտական u/oye և արգելական mi մասնիկների միջոցով (տե՛ս ստորև):

### Հոգնակիակերտ ձևորդներ

Խուռի-ուրարտերեն բայում գործածվել են հետևյալ հոգնակիակերտ ցուցիչները.

<sup>44</sup> Այս ձևին մյուս բարբառներում համապատասխանում է man-ukku ձևը:

(a)s/z(a/e), որը, ըստ Լուրյան, անվանական (դերանվանական) հոգնակիակերտ մասնիկն էր և գործածվում էր էրզատիվ խոնարհման որոշ բայաձևերում, որոնց վերջավորությունները, ինչպես վերը նշվեց, ծագում են ստացական դերանուններից (տե՛ս Աղյուսակ 7). ṣewenaṣuṣ, Mari 5<sub>8</sub>; uravṣa- Mit. I<sub>80</sub>; DINGIR-ašte, passim; ṣidištovṣe, YKH 18<sub>9</sub>:

-(la) (խուռ.) / -le (ուր.) 3 դ. հոգնակի քվի դերանվանական ածանցը գործածվում էր արտոյտաիվ խոնարհման բայերի հետ և անիբական եղանակների որոշ ձևերում. խուռ. usukka-lla- «չեն գալիս», Mit. I<sub>3</sub>, ittai-ṣe-lla- «թող զման» Mit. IV<sub>52</sub>; ուր. ḥaṣia-l(e)-me «ինձ լսեցին», YKH 155 B<sub>31</sub>:

(id) (խուռ.) / -it- (ուր.) ածանցը գործածվում էր էրզատիվ խոնարհման դերբում և անիբական եղանակների բայաձևերում. խուռ. itt-id-en «թող զման», Mit. III<sub>23</sub>; ուր. ḥa-it-o ‘նրանք վերցրեցին’, YKH 155 B<sub>31</sub>:

Ինչպես տեսնում ենք, վերը բերված հոգնակիակերտ ածանցներից առաջինը անվանական էր, երկրորդը՝ դերանվանական, իսկ վերջինը բայական էր և, ամենայն հավանականությամբ, արտահայտում էր գործողության բազմակիություն: Դա կարելի է ենթադրել այդ ածանցի գրադեցրած դիրքից. այն նախնորում էր բայի բնակազմիչ ձայնավորին, նետևարար, վերաբերում էր բայի հիմքին, վախելով նրա իմաստը, մինչդեռ հոգնակիակերտ մյուս ածանցները զբաղեցնում էին բայի երկրի նկատմամբ ամենաձայնային դիրքը:

### Չերբայներ

Խուռի-ուրարտերենին հայանի էին -r-<sup>45</sup> ածանցով կազմված դերբայներ, որոնց նշանակությունը պայմանավորված էր այդ ածանցին նախորդող ձայնավորներով:

*Խուռիերենին* հայանի էին -ire, -ure և -aure ածանցները:

<sup>45</sup> H. G. Wilhelm, Gedanken zur Frühgeschichte der Hurriter und zum hurritisch-urartäischen Sprachvergleich, *Xenia* 21, 1988, 57 ff.



-ire անանցը ներգործական դերբայների ցուցիչն էր (hən-ire 'ծնող', pa-ire 'կառուցող', un-ire 'բերող');

-ure-ն, հավանաբար, գործածվում էր չեզոք սեռի բայերի հետ (mannawar 'չկա, ոչ', բառացիորեն 'գոյություն չունեցող', iz-ure "ստիճանգույն վազող")<sup>46</sup>;

-aure- անանցը վկայված է կրավորական դերբայների կազմում (huz-aure 'կապված, գերված');

*Ուրարտերենում* վկայված են միայն -Ure և -aure անանցները. ag/y-Ure 'անցկացրած', aš-Ure 'գնացած', šid-aure 'կառուցված': Սեպագրիքը ընծեռած հնարավորությունները, ցավոք, բոլը չեն տալիս պարզել, թե. արդյոք, -Ure գրությամբ արտահայտվել են երկու տարբեր անանցներ (\*-ore և \*-üre), թե՞ միայն մեկը: Հեռաբար, պարզ չէ, թե ի՞նչ հասկանիչով էին հակադրված ուրարտերենի դերբայները. ակախվ պասսիվ, թե՞ ներգործական : չեզոք : կրավորական:

Բացի -r- դերբայական անանցից, հայանի էին նաև -iliya- (խու), և -u (ուր.) կրավորական դերբայի անանցները՝ խու. pa-iliya- 'կառուցված', ուր. agun-u- 'ամրացված':

## Մակբայ

Խոտիերենում, բացի՝ հատուկ -ae և -an մակբայական անանցներով կազմված մակբայներից (tišš-an 'շատ', nirož-ae 'լավ', nirubad-ae 'վատ'), ինչպես և ուրարտերենում, վկայված են հատուկ ձևավորում չունեցող մի շարք մակբայներ. խու. anam «այդպես», innammaman «երբևէ», henne «այժմ», faduranne «անցյալում, առաջ», ուր. šišuhane «կրկին», tarane «նորից», hene «այժմ», kannahe «անցյալում», ištine «այնտեղ» և այլն:

<sup>46</sup> Այս անանցի նշանակության մասին կարելի է խոսել ենթադրաբար, բանի որ նրանով կազմված դերբայները, բացի mannawar ձևից, վկայված են անհասկանալի կոնտեքստներում:

## Կապեր

*Խոտիերենում* կապերը ետադիր էին, ինչպես և կարելի էր սպասել, կենտրոն աղ լեզվի վերջածանցային բնույթից<sup>47</sup>:

Խոտիերենում վկայված կապերը անվանական ծագում ունեին (edi- «ամարին», aw/ye- «դեմք», fure- «<sup>3</sup>» և գործածվում էին ստացական եղի և որևէ թեք հոլովի վերջավորության համադրությամբ. edi-ye-da «նրա համար, օգտին», edi-ye-we «նրա վերաբերյալ», ede-š/zu-da «ձեզ համար», ayi-y(e)-da «նրա դիմաց» և այլն:

*Ուրարտերենում*, բացի նմանատիպ կապերից (edi-y(e)-a «դեպի», edi-y(e)-ne «համար»), վկայված են նաև մի քանի ետադրություններ (aptine «կողմից», ašdu «համար», bedine «կողմից»), ինչպես նաև երկու նախդիրներ (pare «մինչև» և kane «առաջ»):

Առաջինը, անշուշտ, հնդեվրոպական ծագում ունի<sup>48</sup>, երկրորդը, ըստ կրեոլոգի, կազմված է \*ka- տարրից, -y- Յդ. ստացական հոդից և -ne հարաբերակցական մասնիկից (< \*ka-ye-ne Tošpa-ye 'Տոսպայի առաջ', ՄԿՈ 18 8,24 40)<sup>49</sup>: Այս տարրի նախդրային գործածությունը, հավանաբար, նույնպես պետք է վերագրել այլալեզու (ասուրական<sup>50</sup>) սզդեկության. այն վկայված է ուրարտա-ասուրական բիլինգվալում և համասարաախանում է ասուրերեն ina pân նախդրային արտածայությունը:

<sup>47</sup> Հնու. Գրիներգի #27 ունիվերսալիան, որի համաձայն՝ ետադիր կապերը հատուկ են վերջածանցային լեզուներին (J. H. Greenberg, Some Universals of Grammar with Particular Reference to the Order of Meaningful Elements, *Universals of Language*, Cambridge, 1961).

<sup>48</sup> Տես Բ. Բ. Դեպյուտ, *Указ. соч.*, с. 24.

<sup>49</sup> Այսին ka- տարրը վկայված է -avke 1դ. ստացական հոդի գուգակցությամբ. ka-avke «ին սպե», ՄԿՈ, *passim*, ինչպես նաև հոլովական վերջավորության ֆունկցիայով. šuryene-kay-ne «նրա գեղի առջև», ՄԿՈ 155 F<sub>26</sub>: Ամենայն հավանականությամբ, այս նախդիրը պետք է կապել -ke դեյկտիկ տարրի հետ:

## Շաղկապներ

*Խոտիերենին*, բացի ինքնուրույն ստորադասական շաղկապներից (zi- «եթե, բե», iou- «ինչպես որ», imma- «երբ որ»), հայտնի են նաև an, -ma(n) «և» էնկլիտիկ համադասական շաղկապները:

*Ուրարտերենը*, ի տարբերություն խոտիերենից, էնկլիտիկ շաղկապներ չի ունեցել: Վկայված են ewe (< հայերեն *եւ*) «և» համադասական, ինչպես նաև aše «երբ որ, եթե» և iu «երբ որ» ստորադասական շաղկապները:

## Մասնիկներ

### Հարաբերակցական մասնիկներ

Խոտիերենին հայտնի էին երկու հարաբերակցական մասնիկներ. -ne ե -sse:

-ne մասնիկը, ինչպես վերը նշվեց (տե՛ս էջ 12), կապում էր հատկացուցիչը հասակցային. seniffu-we-ne-ž asti-ž “եղբորս կինը”, Mit. III<sub>7</sub>:

-šše-ի միջոցով բարդ ստորադասական նախադասության անտեղեղենաի (որոշյալ անդամի) հոլովական վերջավորությունը միանում էր երկրորդական նախադասության ստորոգյալին. tive-na tanoža-šše-na “(այն) բաները, որ նա արեց”, նույն տեղում, I<sub>73</sub>:

*Ուրարտերենում* -ne մասնիկը հանդես էր գալիս նույն դերով, ինչ և խոտիերենում՝ Haldiy-ne-ne alsaiše-ne ‘Խալդիի մեծությամբ’, YKH, passim.

Ինչ վերաբերում է -šše մասնիկին (կամ որևէ այլ մասնիկի, որի ֆունկցիան լիներ անտեղեղենաի վերջավորությունը երկրորդական նախադասության բային միացնելը), ապա այդ մասնիկի գոյության մասին մենք վաստ չունենք, քանի որ ուրարտերեն տեքստերում վկայված բոլոր հարաբերական նախադասությունների անտեղեղենաները գործածված են ուղիղ (սբստյուտիվ) հոլովով և ունեն -0 վերջավորություն:

## Ժխտական և արգելական մասնիկներ

*Խոտիերենում* հայտնի oya ժխտական մասնիկը ընդհանուր ժխտական իմաստ էր արտահայտում՝ oya-man kožozuuffallan ‘ոչ, ես նրանց չեմ պսիկ / ուշացրել’, Mit. IV<sub>46</sub>:

*Ուրարտերենում* նույն այդ մասնիկը ժխտում էր նախադասության տարրեր անդամներ՝ oye ayšey šidayure ‘ոչինչ չէր կառուցվել’, YKH, passim; oye ayšey LUGAL<sup>MES</sup> hayalane ‘ոչ մի քաղավոր չկարողացավ վերցնել’, նույն տեղում, 155 C<sub>29</sub>:

Ուրարտերենին հայտնի է նաև mi արգելական մասնիկը, որը, ամենայն հավանականությամբ հնդեվրոպական փոխառություն է՝ DINGIR<sup>MES</sup>-še mi tinc mi armuziye mi zilbiye qewrayde kultone ‘աստվածները ո՛չ նրա ամուսնը, ո՛չ ընտանիքը, ո՛չ սերնը երկրի վրա թող չթողնեն’, YKH 281 43-47:

Վկայված են նաև մի շարք այլ մասնիկներ՝ խոտ. pade ‘նույնիսկ’, -momanan ‘մասնավորապես’, -nin ‘իրոք’, adi- ‘այսպիսով’, alaze- ‘արդյոք’, որ. kuye ‘նույնիսկ’:

## Շարահյուսություն

### Նախադասության կառուցվածքը

Խոտիերեն և ուրարտերեն լեզուների շարահյուսության ամենակարևոր առանձնահատկությունը էրգատիվ և արստյուտիվ կառույցների հակադրությունն է:

*Էրգատիվ* կառույցի ենթակայի հոլովը էրգատիվն էր, ուղիղ խնդիրնը՝ արստյուտիվը. խոտ. paššithiffu-ž (երգ.) tive (արս.) ande kuloža “իմ դեպքանք այդ բանը / խոսքը ասաց”, Mit. I<sub>83</sub>; որ. yeše (երգ.) ine pile (արս.) zadove “ես այս ջրանցքը կառուցեցի”, YKH, passim:

*Արստյուտիվ* կառույցի ենթակայի հոլովը տարբերվում էր էրգատիվ կառույցի ենթակայի և նույնանում էր էրգատիվ կառույցի ուղիղ խնդրի հոլովի հետ (ուղիղ խնդիր արստյուտիվ կառույցի նախադասությունը ունենալ չէր կարող). խոտ. seniffuwe asti (արս.) unetta “իմ եղբոր կինը

կժամանի՝, Mit. III<sub>21</sub>; šeniffu (արս.) šudaman paššōzi “իմ եղբայրը ինձ մոտ ուղարկեց՝, նույն տեղում, L<sub>49-50</sub>; Haldine (արս.) uštābe ” Խաղին մեկնեց՝, ՄԿԻ, passim:

#### Բառերի դասավորություն

*Խուռիերենում* գերակշռող էին էրգատիվ լեզուների համար բնորոշ S-(0)-0-Vtr դասավորությունը էրգատիվ կառույցի և S-Vintr՝ արտոյուտիվի համար:

*Ուրարտերենում*, ի տարբերություն խուռիերենից, գերակշռող դասավորությունը բացահայտել չի հաջողվում:

Ե՛վ խուռիերենում, և՛ ուրարտերենում որոշիչը, որպես կանոն, դրվում էր որոշյալից հետո, իսկ հասկացուցիչը՝ հասկացյալից առաջ:

#### Համաձայնություն

Ստորոգյալը խուռիերենում և ուրարտերենում դեմքով և թվով<sup>50</sup> համաձայնվում էր ենթակայի և/կամ խնդրի հետ:

Որոշիչը և հասկացուցիչը հոլովով և թվով համաձայնվում էին որոշյալի և հասկացյալի հետ:

Խուռիերենում որոշիչ երկրորդական նախադասության բայը, գոյականացվելով, համաձայնվում էր որոշյալ անդամի հետ:

Ուրարտերենում նմանատիպ օրինակներ վկայված չեն:

#### Տիպաբանական բնութագիրը

Խուռիերենի և ուրարտերենի կառուցվածքի մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն է ապլիս բնութագրելու այդ լեզուները կոնտենսիվ (բովանդակային) տիպաբանության տեսանկյունից:

Ինչպես վերը նշվեց (տես Ծանոթագրություն 1), յուրաքանչյուր լեզվի համակարգ պայմանավորված է սովյալ լեզվին հատուկ սեմանտիկ դետերմինանտով: Մակայն քանի որ լեզուների կառուցվածքը (և, հետևաբար, տիպաբանությունը) զարգացման ընթացքում

<sup>50</sup> Համաձայնության բացակայության դեպքերի մասին տես էջ 27-28:

փոփոխություններ է կրում, բացարձակ մաքուր տիպի լեզուներ գոյություն ունենալ չեն կարող: Յուրաքանչյուր լեզվում այդ լեզվի տիպաբանությանը հատուկ կառուցվածքային հատկանիշների (խեղիկացիաների) կողքին ներկա են այլ տիպերին բնորոշ ռեիկտային (մնացուկային) կամ իննովացիոն երևույթներ (նորամուծություններ), որոնք հանդես են գալիս ֆրեկվենտադիաների ձևով: Այդ երևույթները, որոնք հաճախ հակասում են լեզվի տիպաբանությանը բնորոշ սեմանտիկ դետերմինանտին, հեշտությամբ բացատրվում են այլ տիպաբանության շրջանակներում:

Այս մտացույժը կիրառելով, ստորև կփորձենք ներկայացնել խուռիերենի և ուրարտերենի տիպաբանական էվոլյուցիան:

*Խուռիերենի* փաստերը լեզվի տարբեր մակարդակներում վկայում են, որ այն էրգատիվ տիպաբանության լեզու էր. նրան հատուկ է էրգատիվ և արտոյուտիվ շարահյուսական կառուցվածքների, էրգատիվ և արտոյուտիվ հոլովների, բայերի էրգատիվ (անցողական) և արտոյուտիվ (անանցողական) խոնարհումների հակադրությունը:

Մակայն որոշ արխայիկ բարբառներում բայի դիմավոր ձևերում համոլիպող 3 դ. եզակի թվի սուբյեկտային դերանվանական մասնիկը, որը գործածվում էր ոչ միայն անցողական, այլև անանցողական թայածներում, բայց ոչ երբեք վիճակ արտահայտող բայերում, վկայում է գործողության և վիճակի սուբյեկտների հակադրության մասին: Այդ հակադրությունը, ինչպես հայանի է, հատուկ է ակտիվ տիպաբանության լեզուներին, հետևաբար կարելի է եզրակացնել, որ խուռիերենը իր զարգացման վաղ շրջանում ակտիվ տիպի լեզու է եղել:

Ակտիվ տիպաբանության ռեիկտ կարելի է համարել նույնպես արխայիկ բարբառներում վկայված 3 դ. եզակի թվի և 2 դ. հոգնակի թվի ստացական դերանունները, որոնք, ըստ երևույթին, սկզբնապես արտահայտել են օրգանական (անօտարելի) պատկանելություն:

Հայանի է, որ անօտարելի պատկանելության քերականական կարգը հասկանալի է ակտիվ տիպաբանության լեզուների համար:

Ակտիվ տիպաբանության մնացուկային երևույթ է նաև արտոյուտիվ հոլովի գործածությունը խոտի-խեթական բիլինգվալում ոչ միայն ուղիղ, այլև անուղիղ խնդրի իմաստով, ինչպես նաև անձնական դերանվանական ածանցների նման գործածությունը բոլոր բարբառներում:

Վերջապես, ակտիվ տիպաբանության հետք է վաղ բարբառների ոչ-երգատիվ խոնարհման համակարգում ժամանակի կարգի բացակայությունը:

Խոտիերենի հնագույն բարբառներում անցողական իմաստի բայերում վկայված -o- և -i- բնակազմիչ ձայնավորների հակադրությունը (առաջինը գործածվում է S-O-Vtr կառուցվածքի, իսկ երկրորդը՝ S-Vdetr կառուցվածքի նախադասություններում, որոնց բայերը հաճախ անդրադարձ իմաստ ունեն), անշուշտ, կենարոնախույս (-o) և կենարոնամետ (-i) վերսիայի արտացոլումն է խոտիերենում: Վերսիայի քերականական կարգը ևս հատկանշական է ակտիվ տիպաբանության լեզուների համար:

Բացի ակտիվ տիպաբանության լեզուներին հատուկ վերը նշված առանձնահատկություններից, խոտիերենին հատուկ են նաև որոշ գծեր, որոնք կարելի է որակել որպես ուշ երգատիվ կամ վաղ նոմինատիվ լեզուների հատկանիշներ:

Այդ գծերից է -ire և -aure ածանցներ ունեցող դերբայների հակադրությունը ըստ սեռի (-ire ածանցով դերբայները ներգործական / ակտիվ էին, իսկ -aure ածանց ունեցողները՝ կրավորական / պասսիվ):

Սեռի քերականական կարգը բնորոշ է նոմինատիվ տիպաբանությանը, թեև կարող է ձևավորվել դեռևս նախանոմինատիվ տիպաբանության լեզուներում:

Նոմինատիվ լեզուների առանձնահատկություններից է նաև զարգացած սեռական հոլովի առկայությունը, որը, բացի հարաբերական և ստացական իմաստից, կարող էր հանդես գալ նաև որպես genetivus subjectivus և genetivus objectivus: Խոտիերենում genetivus objektivus-ի

օրինակներ վկայված չեն, սակայն հայտնի է genetivus subjectivus-ի մեկ օրինակ՝ taženewe (սեռ.) ittumme “նվերի մեկնումը”, Mit. I<sub>92-93</sub>:

Այս փաստերը, անկասկած, վկայում են երգատիվ տիպաբանությանը պատկանող խոտիերեն լեզվի ներսում ձևավորվող նոմինատիվության մասին:

*Ուրարտերենը*, ինչպես և խոտիերենը, իր հիմնական գծերով երգատիվ տիպաբանության լեզու էր՝ նախադասության երգատիվ և արտոյուտիվ կառուցվածքների, գոյականի երգատիվ և արտոյուտիվ հոլովների և բայի երգատիվ և արտոյուտիվ խոնարհումների հակադրությամբ: Մական նոմինատիվ լեզուներին բնորոշ առանձնահատկությունների թիվը այստեղ գերազանցում է խոտիերենին. ի տարբերություն երգատիվ տիպաբանության լեզուներից, որտեղ անցողական բայի ուղիղ խնդիրը նույնանում է անանցողական բայի ենթակայի հետ, այստեղ 3 դ. եզակի թվի -ne օրյեկտային ածանցը տարբերվում է անանցողական բայի ենթակայի -be ցուցիչից: Այս տարբերությունից հետևում է, որ երգատիվ ուրարտերեն լեզվի այս հատվածում սուբյեկտը հակադրված է օրյեկտին, մի երևույթ, որ հատկանշական է նոմինատիվ լեզուների համար:

Վերը ներկայացված փաստերը թույլ են տալիս վերականգնել խոտիերեն և ուրարտերեն լեզուների տիպաբանական էվոլյուցիան:

Խոտի-ուրարտերեն նախալեզուն կարելի է բնութագրել որպես ակտիվ տիպաբանության լեզու՝ այդ տիպաբանությանը հատուկ ակտիվ : ինակտիվ սկզբունքների հակադրությամբ և այդ հակադրությունից բխող կառուցվածքային բոլոր առանձնահատկություններով: Այն փաստը, սակայն, որ այդ երկու լեզուներում երգատիվ և արտոյուտիվ շարքի գիտնորշ ածանցները, ինչպես և երգատիվ հոլովի ցուցիչը ընդհանուր են, կարելի է եզրակացնել, որ ակտիվ կառուցվածքի քայքայումը և երգատիվի ձևավորումը տեղի են ունեցել նախախոտիուրարտական շրջանում, նախորդելով նախալեզվի արաբմանը:

## II. Էլամերեն լեզուն

Սեդմագրի այս բաժնի հիմքում ընկած է հայցողի “The Elamite Language” (Roma, 1998) մենագրությունը:

### Աղբյուրները

Էլամերեն լեզուն տարածված էր Իրանի հարավային և հարավ-արևմտյան շրջաններում (Ֆարս, Խուզիստան) առնվազն մ.թ. ա. III հազարամյակի կեսերից մինչև I հազարամյակի վերջերը:

Էլամերեն սեպագիր հնագույն արձանագրությունը մ. թ. ա. 23 դարով թվագրվող Ակկադի արքա Նարամ-Սուննի և Էլամի առաջնորդ Հիաայի միջև կնքված պայմանագիրն է: III հազարամյակի վերջին և II-ի սկզբին են վերաբերում ևս մի քանի փոքրածավալ տեքստեր: Այս տեքստերի էլամերեն լեզուն պայմանականորեն կոչվում է հին էլամերեն:

Ժամանակագրական առումով դրանց հաջորդում են 13-12րդ դարերի մեծաթիվ շինարարական արձանագրություններ: Այս ժամանակաշրջանի լեզուն գիտությանը հայտնի է որպես միջին էլամերեն (ՄԷ):

Հաջորդ, այսպես կոչված նոր էլամական փուլը ներկայացված է 8րդ դարի տեքստերով՝ շինարարական արձանագրություններով, նամակներով և տնտեսական բնույթի տեքստերով:

Եվ, վերջապես, էլամերենի վերջին փուլը՝ արեմենյան էլամերենը (ԱԷ), վկայված է արեմենյան ժամանակաշրջանի (6-5 դդ.) հազարավոր տնտեսական տեքստերով և արեմենյան թագավորների եռալեզու (էլամերեն-ակկադերեն-հին պարսկերեն) արձանագրություններով:

Լեզվի բարապաշարի ուսումնասիրության համար կարևոր աղբյուր են նաև ակկադերեն և հին պարսկերեն տեքստերում վկայված բազմաթիվ էլամերեն բառերը:

### Ուսումնասիրության վիճակը

Էլամերենի ուսումնասիրությունը, որ սկիզբ է առել անցյալ դարում, կառվում է Վայսբախի, Բորկի, Հյուզինգի, իսկ հետագայում ֆոն Օրանդենշաայնի, Ֆրիդրիխի, Հինցի անունների հետ:

Էլամագիտությունը նոր թափ է ստանում դարի 40-ական թվականների վերջում: Էլամերենի ուսումնասիրությանն են նվիրված Հելլոթի, Քամերոնի, Քյոնիգի, Լաբառի, Դյակոնովի, Ռայների, Գրիյո-Սուզինիի և հայցողի աշխատությունները:

Էլամերեն տեքստերը հրատարակված են Վայսբախի, Քամերոնի, Հելլոթի, Քյոնիգի և այլոց գործերում:

Լեզվի բառապաշարը ամփոփված է Հինցի և Քոխի ստվարածավալ բառարանում<sup>51</sup>, որում ներկայացված են էլամերեն և այլալեզու տեքստերում վկայված բոլոր էլամերեն բառերը:

Էլամերենի քերականությանն են նվիրված Լաբառի, Դյակոնովի, Ռայների, Գրիյո-Սուզինիի և հայցողի մենագրական ուսումնասիրությունները<sup>52</sup>:

### Հնչյունաբանություն

#### Չայնավորներ

Էլամերենում վերականգնվում են a, i, e, u և, հավանաբար, o ձայնավորները:

#### Բաղաձայններ

Էլամերենի համար հատկանշական է բաղաձայնների հակադրությունը ոյ թի ըստ ձայնի, այլ ըստ ինտենսիվության: Բաղաձայնների լինտենսիվությունը միջձայնավորական (ինտերվոկալ) դիրքում հաճախ

<sup>51</sup> W. Hinz und H. Koch, *Elamisches Wörterbuch* (in 2 Teilen), Berlin, 1987.

<sup>52</sup> R. Labat, *Structure de la langue élamite, Conférences de l'Institut de linguistique de l'Université de Paris IX, années 1950-1951*, Paris, 1950; И. М. Дьяконов, *Эламский язык, Языки древней Передней Азии*, М., 1967, сс. 85-12; E. Reimer, *The Elamite Language, Handbuch der Orientalistik, Erste Abteilung, Zweiter Band, Erster und Zweiter Abschnitt, Lief. 2*, Leiden/Köln, 1969, 88, 54-118; F. Grillo-Susini, avec la collaboration de Claude Roche, *Éléments de grammaire élamite*, Paris, 1987; M. Khačikjan, *The Elamite Language*, Roma, 1998.

արտահայտվում էր բաղաձայնների կրկնությամբ: Բառակազմում, հավանաբար, ինտենսիվ բաղաձայնները, ի տարբերություն ոչ-ինտենսիվներից, նշանակվում էին խալ բաղա-ձայններ պարունակող նշաններով:

Վերականգնվում են հետևյալ բաղաձայնները. *p, p<sup>o</sup>, d, t<sup>o</sup>, k, k<sup>o</sup>, h, s, š, c(?)*, *č, v, m, n, r, l*:

Բառավերջի ձայնավորների ռեդուկցիան և բազմավանկ բառերի վերջին վանկի ձայնավորի անկումը թույլ են տալիս ենթադրել, որ շեշտը էլամերենում ընկնում էր առաջին վանկի վրա:

### Բառի կազմությունը

Բառակազմության առասկետից էլամերենը կցական վերջածանցային լեզու էր:

Բառի արմատը կազմված էր երկու բաղաձայններից և մեկ կամ երկու ձայնավորներից. *nap* 'աստված', *ruh* 'տղամարդ', *zana* 'տիրուհի':

### Գոյականների կազմությունը

Գոյականը էլամերենում բաղկացած էր

ա) արմատից՝ *kap* 'զանձ', *zana* 'տիրուհի':

բ) բնակազմիչ ձայնավորով ընդլայնված հիմքից՝ *kukk-i* 'կամար':

գ) արմատից / հիմքից և դասային ցուցիչներից / բառակազմական ածանցներից՝ *sunki-r* 'թագավոր', *sunki-me* 'թագավորություն':

դ) բաղադրյալ հիմքից և բառակազմական ածանցներից՝ *si-me-n* 'երկնականար', *kik-muru-n* 'տիեզերք':

Դասային ցուցիչների գործածությունը պայմանավորված էր գոյականի դասով. 3դ. շնչավոր դասի ցուցիչները *-r* (եզակի) / *-p* (հոգնակի) գործածվում էին շնչավոր գոյականների հետ, իսկ 3 դ. ոչ-շնչավոր դասի *-me, -t, -n* ցուցիչները՝ անշունչ առարկա արտահայտող գոյականների հետ. *liba-r* 'ծառա', *liba-p* 'ծառաներ', *hinduya-ra* 'հնդիկ', *hinduš-pe* 'հնդիկներ', *takki-me* 'կյանք', *hala-t* 'աղյուս':

Պետք է նշել, որ դասային ցուցիչները, որոնցով պայմանավորված էր էլամերենի ամբողջ կառուցվածքը, կատարում էին ոչ միայն բառակազմական, այլև շարահյուսական ֆունկցիա, տե՛ս ստորև:

### Բառի կազմությունը

Բառական հիմքը կազմվում էր

ա) արմատի և բնակազմիչ ձայնավորի համակցումով՝ *kuk-i* 'պաշտպանել':

բ) կրկնությամբ (ռեդուպլիկացիա)՝ *tallu-* < \**tal+tal-u* 'զրել', *hapu-* < \**hap+hap-u* 'սել':

գ) բառարարդման միջոցով՝ *mur+ta-* 'զեախն+դնել > աեղավորել':

Բառի հիմքին կարող էին միանալ *-ma-* և *-nu-* բայական ածանցները, որոնց հետևում էին դիմավոր վերջավորությունները կամ դերբայական ցուցիչները՝ *tiri-ma-nu-n* "(մենք) կոչվում ենք", DB 9:

### Գոյական անուն

Էլամերենի գոյականին հայտնի էին *բլի* (եզակի : հոգնակի) և *դասի* (շնչավոր : անշունչ) քերականական կարգերը:

Շնչավոր դասի ցուցիչներն էին *-r* և *-p*, իսկ անշունչ դասինը՝ *-me*: Քանի որ դասի քերականական կարգը թաքնված (*covert*) կատեգորիա էր, այն ստորաբար արտահայտված չէր գոյականում. *šak* 'որդի', *kik* 'երկինք':

Հոգնակի թիվը հասուկ էր միայն շնչավոր գոյականներին և արտահայտվում էր հոգնակիի *-p* դասային ցուցչով՝ *sunki-r* (եզակի) : *sunki-p* (հոգնակի):

Հորովան քերականական կարգը էլամերենին հայտնի չէր, և հատկացուցիչ - հատկացյալ հարաբերությունները արտահայտվում էին դասային ցուցիչների միջոցով (հատկացյալի դասային ցուցիչը միանում էր հատկացուցչին)՝ *temti alimeli-ri* 'միջնաբերդի տերը'; *dari-p Narimsin-ippa* "Նարամսինի դաշնակիցները; *sijan Inšušinak-me* 'Ինշուշինակի տաճարը': Մակայն ավելի ուշ շրջանում՝ նոր և,

հատկապես, արեմենյան, բոլոր այդ ցուցիչները դուրս են մղվում -n, հավանաբար, չեզոք դասային ցուցիչի և -a հարաբերակցական մասնիկի համադրությունից առաջացած վերջավորությամբ (-na): Վերջինս փաստորեն վերածվում է սեռական հոլովի ցուցիչ՝ şalmu Šutruk-Nahhunte-na “Շուտրուկ-Նաումանե-ի արձանը:

*Տարածական հարաբերությունները* արտահայտվում էին մի շարք էնկլիտիկ ետադրություններով -ikki «դեպի», -ma «վրա, մեջ», -akku «վրա», -mar «-ից» և այլն:

### Ածական անուն

Ածականները էլամերենում կազմվում էին գոյականական կամ դերբայական հիմքին դասային ցուցիչների (riša-ri 'մեծ', lansiti-ռու 'ոսկյա'), -a հարաբերակցական մասնիկի (karsuk-a 'ներկած', lansiti-a 'ոսկյա'), այդ երկուսի համադրությամբ կազմված ձևորդների (upati-ռու-a 'աղյուսե', riša-rr-a 'մեծ') կամ -na վերջավորության (malu-na 'փայտե') կցումով:

*Համեմատական աստիճանը* տեքստերում վկայված չէ:

*Գերադրական աստիճանը* արտահայտվում էր ածականի և որոշյալ գոյականի հոգնակի «սեռական» հոլովածկի համադրումով. rišar nappi-p-ir 'մեծագույնը աստվածներից':

### Թվական անուն

Քանի որ էլամերեն տեքստերում քվականները հիմնականում թվերով էին արտահայտվում, հայտնի են միայն ki(r) “1”, mar “2(?)”, zit “3” թվականները:

*Դասական քվականները* կազմվում էին քանակականներից -ummemana ածանցի (տարբեր վերափոխություններով) միակցումով:

*Կոտորակները* կազմվում էին -irmaki ձևորդի (բառացիորեն «մեկը նրա մեջ») միջոցով՝ 3-irmaki “1/3”, 2 3-irmaki “2/3”:

### Ղերանուններ

#### Անձնական ղերանուններ

Անձնական ղերանունները էլամերենում հետևյալն էին. u «ես», nu/ni «դու», nusu «մեր», nuku «դուք»:

3 դ. ղերանունների ֆունկցիայով հանդես էին գալիս ցուցական ղերանունները (սե՛ս սառև):

Ինչպես և գոյականներին, անձնական ղերանուններին հասուկ էին հարաբերական / սաացական հոլովի, ինչպես նաև մի շարք ստրածական հոլովների ձևեր. սեռական *ami-na* 'իմ', դիբեկաիվ *u-ikki* 'ի՞նձ մոտ, դեպի ինձ', բացառական *nu-ik-mar* 'քեզանից':

Մական, ի տարբերություն գոյականներից, որտեղ սուբյեկտային-օբյեկտային հարաբերությունները ձևաբանորեն արտահայտված չէին, անձնական ղերանունները ունեին հասուկ օբյեկտային (հայցական հոլովի) ձև, որը կազմվում էր -n ձևաչափի միջոցով. u-n “ինձ” *nusu-n* 'ձեզ' և այլն:

#### Ցուցական ղերանուններ

Էլամերենում վկայված են (h)i, ap(i), hu(pe) ցուցական (դեյկտիկ) ղերանունները:

(h)i «այս, սա» և hu «այն, նա» հիմքերը տարբերվում էին ըստ մասնանշվող առարկայի հեռավորության:

ap 'տրանք' և (h)i 'սա, այս հիմքերը հակադրվում էին ըստ թվի: Գոյականաբար գործածվելիս, այդ ղերանունները հանդես էին գալիս նաև անձնական ղերանունների ֆունկցիայով՝ *appanka u-ikki-mar ap* *irikka hube huttaš* 'կրք իմ կողմից նրանց ասվում էր (որևէ բան), (նրանք) դա անում էին', DB 8:

l և ap ղերանունները, ինչպես և անձնականները, ունեին -n տարրի միակցումով կազմված հասուկ օբյեկտային ձևեր. i-n, apu-n: Վկայված է նաև անուղղակի խնդրի իմաստով գործածվող *ha* «նրան» ղերանունը, որը, հավանաբար, ծագումնաբանորեն կապված է «այստեղ»

դերանվանական մակրայի հետ<sup>53</sup>: Սուբյեկտային ձևին հակադրված օբյեկտային (ուղիղ և անուղղակի) ձևերի գոյությունը, թեկուզ և միայն դերանունների համակարգում, վկայում է էլամերենում նոմինատիվ տիպաբանության ձևավորման մասին<sup>54</sup>: Հավանաբար, դեյկտիկ իմաստ ուներ նաև *inno/a* տարրը, որը վկայված է *aminno* և *innoakki* «հենց այս/այն» ցուցական դերանունների կազմում:

#### Ստացական դերանուններ

Էլամերենում վկայված ստացական դերանունները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի դերանունները, որոնք, ըստ էության, ատրիբուտիվ ֆունկցիայով հանդես եկող անձնական դերանուններն էին, կազմվում էին անձնական դերանվան և որոշյալ գոյականի դասային ցուցչի զուգակցումով՝ *takkime-u-me* 'իմ կյանքը', *napir-u-ri* 'իմ աստվածը', *ritu-ni-ri* 'քո կինը', *aianip-nika-be* 'մեր ազգականները' և այլն:

Երկրորդ խմբի, կամ բուն ստացական դերանուններն են *-ta* 'իմ' (*atta-ta* 'իմ հայրը'), *-ni* 'քո' (*par-ni* 'քո սերմը/ընտանիքը'), *-e* 'նրա' (*hiš-e* 'նրա անունը'):

Որոշակի օրինաչափություն այդ երկու խմբերի դերանունների գործածության մեջ չի նկատվում: Մակայն նրանց գոյությունն իսկ ենթադրել է տալիս, որ լեզվի վաղնշական շրջանում էլամերենին բնորոշ էր օտարելի : անօտարելի պատկանելության հակադրությունը:

Օտարելի և անօտարելի պատկանելության հակադրությունը, ինչպես վերը նշվեց, հատուկ է ակտիվ տիպաբանության լեզուներին, ուստի այդ քերականական կարգի հետքերը էլամերենում վկայում են էլամերենի ակտիվ անցյալի մասին:

<sup>53</sup> St' u F. Bork, *Mitteilungen der Altorientalischen Gesellschaft* 7/3, 1933, S.17.

<sup>54</sup> Նմանատիպ երևույթի հանդիպում ենք նաև ուրարտերենում, որին հատուկ էր 3 դ. սուբյեկտային *-be* և օբյեկտային *-ne* ցուցիչների, ինչպես նաև 1 դ. ուղիղ *-de* և անուղղակի *-me* խնդիրների հակադրությունը:

#### Հարարերական, անորոշ, հարցական դերանուններ

Հայտնի են *akka* (շնչավոր եզակի), *akkabe* (շնչավոր հոգնակի), *appa* (անշունչ) *հարարերական դերանունները*:

Այս խմբի դերանուններին, ի տարբերություն անձնական և գոյականաբար գործածվող ցուցական դերանուններից, բնորոշ չէին հատուկ օբյեկտային ձևեր: Ուղիղ խնդրի դերում հանդես էր գալիս անշունչ դասի դերանունը, անկախ նրանից, թե որ դասին էր պատկանում որոշյալ գոյականը. *hal appa kušihā* 'hal-ը, որ ես կատուցեցի', EKI 13 VIII; *appi 9 sunkip appa u ... maḫrija* 'ահա 9 բազավորները, որոնց ես ... բռնեցի', DB 53:

*appa* անշունչ / ինակտիվ դերանվան այսպիսի գործածությունը սովորական է ակտիվ տիպաբանության լեզուների համար, որոնցում ինակտիվ կառույցի սուբյեկտը ձևաբանորեն նույնանում է ակտիվ կառույցի օբյեկտի հետ:

*Անորոշ դերանուններից* վկայված են *akka* դերանվան և *-r* ակտիվ շնչավոր դասի ցուցչի զուգորդումով կազմված *akkari* «որևէ մեկը» և *aški* (բառացի «մեկ մաս») «ինչ-որ, որևէ բան» դերանունները. *sunkip uruppa akkara ... inri buttanra ...* 'նախորդ թագավորներից ոչ ոք (բառացի. որևէ մեկը) չէր արել', EKI 17 II; *akkari aški ... inno lilmak* 'ոչ ոք ոչինչ (բառացի. որևէ մեկը որևէ բան) չէր ասում', DB 13:

Սերված օրինակներից երևում է, որ էլամերենին հայտնի չէին հատուկ ժխտական դերանուններ և որ ժխտումը միակի էր:

*Հարցական դերանուններից* հայտնի է միայն *appa* «ի՞նչ, ո՞ր» դերանունը: Թեև «ո՞վ» դերանունը վկայված չէ, պետք է ենթադրել, որ այն արտահայտվում էր *akka* ձևով:

#### Որոշյալ, անորոշ, սաստկական դերանուններ

Այս խմբի դերանուններից մեզ հայտնի են *kappatna* «ամբողջ», *marrida* (հոգնակի՝ *marbeḫda*) «ամեն, բոլոր», *dae* (հոգնակի՝ *daip*) «այլ,



ուրիշ», *uora*(na) «ամեն», *kurika* «յուրաքանչյուր» և *hisu*(da) «նա ինքը» դերանունները:

Անդրադարձ դերանուններ

Անդրադարձ դերանունների ֆունկցիայով էլամերենում հանդես էր գալիս *du*(h)- բառույթը ստացական դերանվան (*duh-e* 'իր', *duh appini* / *dupe* 'իրենք') և օբյեկտային -*n* մասնիկի (*du-n* «ինքն իրեն / ինքդ քեզ») գուգակցությամբ:

Այն փաստից, որ բացի *du-* ձևից նույն իմաստով գործածվում էր նաև *duman-* ածանցավոր բայական ձևը, հետևում է, որ այս դերանունը ծագում է «սեփականացնել» իմաստ ունեցող բայից:

**Քայ**

Էլամերենի բային հատուկ էին *քվի* (եզակի : հոգնակի), *ղեմքի*, *կերպի* / *ժամանակի* (կատարյալ / անցյալ : անկատար / ներկա-ապառնի), *եղանակի* (սահմանական, հրամայական, անիրական) և *սեռի* (ակտիվ / պասսիվ) քերականական կարգերը:

Կերպ / ժամանակ

Կատարյալ կերպի բայը ուներ երկու խոնարհում, պայմանավորված բայի անցողականությամբ / անանցողականությամբ:

*Անցողական (I) խոնարհման* բայաձևերը կազմված էին բայի հիմքից և սուբյեկտային վերջավորություններից (տե՛ս Աղյուսակ 8), իսկ բայի օբյեկտը արտահայտվում էր բայաձևից դուրս:

Աղյուսակ 8

	Եզակի	Հոգնակի
1 դ.	-h (ՄԷ), -0 (ԱԷ)	-hu (ՄԷ), -u (ԱԷ)
2 դ.	-t	-ht (ՄԷ), -t (ԱԷ)
3 դ.	-š	-hš (ՄԷ), -š (ԱԷ)

*Անանցողական (II) խոնարհման* բայաձևերը կազմվում էին -*k*-ով վերջավորվող կատարյալ (անցյալ ժամանակի) դերբային (տե՛ս ստորև)

դասա-դիմային դերանվանական ցուցիչների (տե՛ս Աղյուսակ 9) միակցումով:

Բացի անանցողական բայերից, II խոնարհման էին պատկանում նաև կրավորական սեռի բայերը, տե՛ս ստորև:

*Անկատար կերպի / ներկա-ապառնի ժամանակի (III խոնարհում)* բայաձևերը կախված չէին բայի անցողականությունից / անանցողականությունից:

*III խոնարհումը* կազմվում էր -*n*-ով վերջավորվող անկատար (ոչ-անցյալ ժամանակի) դերբայի հիմքին դասա-դիմային ցուցիչների միակցումով, տե՛ս Աղյուսակ 9:

Աղյուսակ 9

	II խոնարհում	III խոնարհում
1 դ. եզակի	-k+-ki-	-n+-ki
2 դ.	-k+-ta	-n+-ti
3 դ.	-k+-0	-n+-ra
3 դ. հոգնակի	-0+-p	-n+-pi

Սերը արդեն նշվեց, որ I խոնարհման վերջավորությունները սուբյեկտային էին, իսկ նախադասության օբյեկտը (ուղիղ խնդիրը) արտահայտվում էր բայաձևից դուրս: Այն արտահայտվում էր գոյականների և / կամ օբյեկտային դերանունների միջոցով:

Այդ դերանունները վերջավորվում էին -*n* (*u-n*, *nu-n*, *i-n*) տարրով, բացի այն դեպքերից, երբ 3 դ. եզակի թվի օբյեկտը շնչավոր էր. այդ դեպքերում դերանվանը ավելանում էր -*r* շնչավոր / ակտիվ անվան ցուցիչը. *Napiriša u-n haniš* 'Նապիրիշա (աստվածը) ինձ սիրեց', EKI 4c III; *sijan kuših ... Išnikarap ... i-n dumih* 'ես տաճար կառուցեցի (և) տվեցի

այն Իսնիկարապիմ', նույն տեղում, 6e II-III; Pelala lansitirra i-r šarih 'ոսկե Պելարապիմ ես ձուլեցի'<sup>55</sup>, նույն տեղում, 10b IV:

II և III խոնարհման բայաձևերին սովորաբար նախորդում էին եզակի թվի 1 և 2 դեմքերում -n և 3 դեմքում -r աարբերը: Այդ աարբերը կատարում էին անաֆորիկ ֆունկցիա, կրկնելով նախադասության ենթական, այլ կերպ ասած, հանդես էին գալիս ենթականի դերում. sap Madabekki n-paruk-ki-t "երբ ես եկա Մեդիա", DB 31; hi šila appi r-titukka "Այսպես էր նա նրանց խաբում", նույն տեղում; nu u n-tahhanta, 'քանի որ դու ինձ օգնում ես' EKI 28A 21; Inšušinak ... u r-tahhanra 'քանի որ Ինշուշինական ինձ օգնում է', 20 III:

Համեմատելով դերանվանական և օբյեկտային վերջավորությունները և II խոնարհման բայերի հետ գործածվող -n և -r անաֆորիկ սուբյեկտային աարբերը, գալիս ենք այն եզրակացության, որ անաֆորիկ դերանունների մակարդակում անցողական (I) խոնարհման բայերի ուղիղ խնդիրը համընկնում էր անանցողական (II) խոնարհման բայերի սուբյեկտի հետ: Իսկ քանի որ անցողական բայի ուղիղ խնդրի և անանցողական բայի ենթականի միանման ըմբռնումը և ձևավորումը հատկանշական է էրզատիվ լեզուների համար, եզրակացնում ենք, որ էլամերեն բային անցյալ ժամանակում հատուկ էր էրզատիվ : արսույրտիվ հակադրությունը:

Վերադառնալով II խոնարհման բայաձևերին, նկատում ենք, որ 3 դ. եզակի թվի ձևում բացակայում էր -r դիմավոր վերջավորությունը, իսկ 3 դ. հոգնակի թվի ձևում -k դերբայական ցուցիչը: Այդ առաջին հայացքից տարօրինակ շեղումները հարացույցից իրենց բացատրությունն են գտնում ակտիվ ախպարանության շրջանակներում: Ամենայն հավանականությամբ, էլամերենի անանցողական բայերի խոնարհումը ծագում է ինակտիվ վիճակի բայերի խոնարհումից: Իսկ ակտիվ լեզուներում ինակտիվ բայերը սովորաբար չեն հարաբերակցվում

<sup>55</sup> Թեև խոսքը Պելալա աստվածության արձանի մասին է, այն նույնացվում է աստվածության հետ և ընկալվում որպես շնչավոր / ակտիվ:

ակտիվ սուբյեկտների հետ, այդ իսկ պատճառով ակտիվ / շնչավոր դասի ցուցիչը չէր կարող գործածվել ինակտիվ խոնարհման բայերի հետ:

II խոնարհման -k ցուցիչ բացակայությունը 3 դ. հոգնակի թվի ձևում նույնպես բացատրվում է ակտիվ ախպարանության շրջանակներում. ակտիվ ախպարանության լեզուներում ինակտիվ / անշունչ գոյականները չեզոք են թվի նկատմամբ և, հետևաբար, ինակտիվ բայերը չունեն հոգնակի թվի ձևեր: Հետևաբար, \*-k-p ձևի գոյությունը հնարավոր չէր էլամերեն լեզվի ակտիվ փուլում, ուստի և II խոնարհման հոգնակի 3 դ. ձևը պետք է փոխ առնվեր մեկ այլ հարացույցից, այն է. ներկա ակտիվ դերբայի հոգնակի ձևից, տե՛ս ստորև:

#### -ma- ածանցը

Բայի հիմքին հաճախ հետևում էր -ma ածանցը, որի նշանակության և ծագման մասին տարբեր կարծիքներ են արտահայտվել. դուրատիվ / շարունակական (Լաբատ)<sup>56</sup>, ինտենսիվ / խտրատիվ / կրկնվող (Հելլոթ)<sup>57</sup>, եղանակավորող (Գրիյո-Սուզինի)<sup>58</sup>: Ելնելով -ma- մասնիկով մեզ հայտնի բայերի նշանակությունից. pepšir-ma-h "ես նորոգեցի", mišir-ma-k "խարխլված" (վիճակի փոփոխություն), tiri-ma-nun "մենք կոչվում ենք" (դուրատիվ), հայցողը միանում է Մաբ-Ալփինի կարծիքին: Վերջինս կապում է այդ մասնիկը պրոտոէլամադրավիդյան \*man- «դառնալ» բայի հետ, նշելով այդ բայի սեմանտիկ կապը դուրատիվ / խտրատիվ իմաստի հետ<sup>59</sup>:

#### -nu- /-un- ածանցը

Տարբեր կարծիքներ կան նաև III խոնարհման բայերի կազմում հանդիպող այս ածանցի վերաբերյալ:

<sup>56</sup> R. Labat, Structure ..., 36.

<sup>57</sup> R. T. Hallock, *Journal of Near Eastern Studies* 18, 1956, 44, n. 12.

<sup>58</sup> F. Grilhot-Susini, *Éléments* ..., 36.

<sup>59</sup> D. McAlpin, *Proto-Elamo-Dravidian: Evidence and its Implications*, Philadelphia, 1981, 121-122.

Այն փաստը, որ այդ ածանցը (-ու-, եթե ընդունենք, որ այն նախորդում էր -ո III խոնարհման մասնիկին կամ -տ-, եթե համարենք, որ այն հետևում էր այդ մասնիկին) վկայված է հոգնակի ձևերի կազմում. *henka* «ես (սերունդ) ունենամ», *hinunka* «մենք (սերունդ) ունենանք», *huttimanra* «նա անի», *huttinotuba* «նրանք անեն», քույլ է ապիս նրան վերագրել հոգնակիության իմաստ: Ի տարբերություն 3 դ. ձևերից, որոնցում հոգնակի իմաստը կարող էր արտահայտվել հոգնակի թվի դիմա-դասային -ք մասնիկի միջոցով, 1 և 2 դեմքի բայերում -ու- մասնիկը հանդիսանում էր հոգնակի թվի միակ ցուցիչը:

#### Եղանակ

Էլամերենին, բացի *սահմանականից*, հայտնի էին նաև *հրամայական*, *անհրական* (ըղծական / հարկադրական) և *արգելական* եղանակները:

*Հրամայական* եղանակը հասուկ ձևեր չուներ և արտահայտվում էր հին և միջին էլամերենում սահմանական եղանակի 2 դ. ձևերով, իսկ արեմենյան էլամերենում բայի հիմքի միջոցով կամ I խոնարհման 3 դ. ձևով՝ *hap-ti Binikir*, *Baha kikip Huban* “լսե՛ք, Բինիկիր, երկնային Բահա, Հուբան”, EKI 2 1; *mida/miteš ... halpi-š 'qinaw ... uqanir'*, DB 25, 26:

*Ըղծական* եղանակը կազմվում էր I և II խոնարհման ձևերին -ո, -ոա, -LI<sup>60</sup> մասնիկների միացումովի *hih-LI / hih-na* “թող ես նվիրեմ”, EKI 3 VI/13 VI; *huttahši-ni 'թող նրանք անեն'*, նույն տեղում, 74 37; *rappak-na 'թող նա կապվի'*, նույն տեղում, 3 VIII; *katakti-ni 'թող դու ապրես'*, DB 60:

*Արգելական* եղանակը կազմվում էր *anu/i* արգելական մասնիկի և III, երբեմն էլ I խոնարհման ձևերի գուգակցումով. *urış anu titkimme elmanti 'հավատա՛ստուս մի կարծիր'*, DB 56; *Nahunte ir šarara ani uzzun* “Արևի տակ թող նա չբայի”, EKI 45 21;

<sup>60</sup> Հին էլամերենում LI նշանը, ինչպես և հին ակկադերենում, հավանաբար, ընթերցվել է en (R. Labat, Structure..., 36):

#### Մեռ

Էլամերենի դերբայական (տե՛ս էջ 47) և անցյալ ժամանակի համակարգում հայտնի էր ներգործական (ակտիվ) : կրավորական (պասսիվ) սեռի հակադրությունը: կրավորական սեռի բայերը ձևով համընկնում էին անանցողական (չեզոք) սեռի բայերի հետ. *hišumi aha talluka tak 'անունս, որ այստեղ գրված և դրված է', EKI 4 IX:*

#### Գոյության բայեր

Էլամերենում վկայված *ni(ma)-* և *šar/n-* “գոյության” բայերը ԱԷ-ում հաճախ հանգույցի դեր էին կատարում, փոխարինելով լեզվի ավելի վաղ շրջանում այդ ֆունկցիայով հանդես եկող դիմա-դասային ցուցիչներին՝ *u Šattarida ... nimanki* “ես Շատտարիդան եմ”, DB 24; *taššup ... harikki šari 'գորքը փոքր էր', DB 25:*

Այս փոփոխությունը արտացոլում է էլամերենի զարգացման տեղեկները անվանական կառուցվածքից դեպի բայականը:

#### tarma- օժանդակ բայը

ԱԷ-ում վկայված *tarma- օժանդակ բայը*, միանալով հիմնական բային, արտահայտում էր ավարտված գործողություն՝ *kuš u hutta tarma* “(Ահուրամազդան ինձ օգնեց) մինչև որ ես ավարտեցի (արեցի-վերջացրեցի)”, DNa 5:

#### Գերբայ

Էլամերենում վկայված են հետևյալ դերբայները.

*ներկա ակտիվ* (I), արտահայտվում էր բայի հիմքով՝ *nuški-* “պահող”, *kuti-* “տանող”;

*անցյալ պասսիվ / չեզոք* (II), կազմվում էր բայի հիմքին -k ածանցի միացումով. *šinnuk 'զնացած'*, *halpik 'սպանված'*;

*ներկա-ապատնի ակտիվ / չեզոք* (III) -n ցուցով, կազմում էր III խոնարհման բայերի հիմքը. *huttan-ra* “անի, կանի”;

նպատակի դերբայ -n(a) ցուցով. u šera h.DUB.Ig tallimana 'ես հրամայեցի արձանագրություն գրել', XV 3:

-r շնչավոր գոյականների ցուցիչը, սիանավով I և II դերբայներին, կազմում էր շնչավոր գոյականներ՝ kap nuški- r 'զանձապահ', halpik-ra 'մեռած (մարդ)', ištuk-ra 'թույլ (մարդ)':

## Մակբայ

Մակբայներն ըստ կազմության բաժանվում էին հետևյալ խմբերի.

ա) պարզ արմատական ձևեր, երբեմն զուգորդված -da մասնիկի հետ. kuš 'մինչև', meša 'հետագայում', am(-da) 'ներկայումս', šašša-da 'առաջ';

բ) ձևեր դասային ցուցիչներով, երբեմն զուգորդված -a, -na կամ -da մասնիկների հետ. aha-r/n'այստեղ', šut-me 'զիշերը', šat-me 'ցերեկը', da-me 'առաջ', mešši-n 'ապագայում', na-r-da 'ամեն օր';

գ) սղված / դասային ցուցիչները կորցրած ձևեր. aha 'այստեղ', šara 'ներքև';

դ) դերբայներից ծագող ձևեր. šara-k 'այժմ', appu-k-a 'առաջ';

ե) տարածական 'հոլովական' ցուցիչներով ձևեր. hi-ma 'այստեղ', hube-ma 'այնտեղ', hube-mamar 'այնտեղից';

զ) բարդ և բաղադրյալ, հաճախ վերլուծության չենթարկվող ձևեր. mešamerašac 'հետագայում', šaššada karadaları 'վաղուց ի վեր':

## Կապեր

Բուն կապեր էլամերենին հայտնի չէին: Նրանց դերում հանդես էին գալիս գոյականներից և բայերից (դերբայներից) ծագող տարածական բառեր: Վերջիններս կազմում էին յուրահատուկ ետա- / նախդրական կապակցություններ, որոնցում ետադրությունը / նախդիրը զանվում էր ատրիբուտիվ կապի մեջ նախադասության տրամաբանական սուբյեկտի հետ՝ sunkir ... akka melkanra ... Nahhunte ir šara-ra par ani kutun "այն թագավորը ..., որը քանդի, թող նրա զարմը Արևի սակ

չբայի', EKI 9 IIIb VII...X; huttak halikume li-ma nu telakni 'քեզ համար արածս-զարդարածս թող պահպանվի', նույն տեղում, 15 V:

Արեմենյան էլամերենում տեղի է ունենում վերոնիշյալ կապակցությունների պարզեցում, և ատրիբուտիվ կապը տեղի է տալիս համադասական կապին (պարատաբիս)՝ kurmin Abzizima ukku 'Արգիզիի ձեռքին (ձեռքի վրա)', PF 43 : 4.

## Մասնիկներ

Էլամերենում վկայված են in, -ani/u, -ni, -a, -ut, -ta, -da/te մասնիկները:

in- ժխտական մասնիկը գործածվում էր միայն ենթակայի դասային ցուցչի հետ զուգորդված. in-gi i n-dunun-ku "ես չեմ տա" EKI 74 38; libar inri kir 'չկա ոչ մի ծառա', PF1859 16:

ani/u արգելական մասնիկը, որ ծագում է նախաէլամադրավիզյան \*aI-ժխտական «չլինել, չդառնալ» բայից, վկայվաց է III, ավելի հազվադեպ I խոնարհման բայերի հետ. anu ir turnampi appa u inno Birtija 'թող չիմանան, որ ես Բիրդիսն չեմ', DB 13; gim ani humahšī 'gim-ը թող չվերցնեն', EKI 45 8:

-ni/a ըղձական մասնիկի մասին տե՛ս վերը :

## Հաստատական մասնիկներ

Բացի -ni ըղձական մասնիկից, հայտնի է նաև հաստատական իմաստ ունեցող -ni մասնիկը՝ ruhira inna šarir-ni [akkari ...] akka ... "խկապես / հաստատապես մի մարդ չկար, որ ...", DB 13:

Հաստատական իմաստ էր, հավանաբար, արտահայտում նաև -i/ut մասնիկը, որը գործածվում էր միայն I դ. ստորոգյալների հետ. sunkip-ut 'մենք թագավորներ ենք', DB 4; huttah-ut 'մենք արեցինք', 18:

## -a մասնիկը

Էլամերենի զարգացման բոլոր փուլերում վկայված այս մասնիկը հանդես է եկել

ա) որպես ածականակերտ/հարաբերակցական ձևորդ, երբեմն գուգորդվելով որոշյալ գոյականի դասային ցուցիչների հետ, *lansiti-a / lansiti-m-a* 'ոսկյա';

բ) երկրորդական նախադասություններում ստորադասական մասնիկի ֆունկցիայով, երբեմն գուգորդվելով անտեղեղենտի դասային ցուցիչ հետ, *tuš pitteka ... appa sunkip urupupi imme huttahš-a* 'tuš pitteka-ն, որ նախորդ թագավորները չէին սարքել ...', EKI 13a II-IV; *sijan ... sunkip urupupi imme kušihš-m-a* ... 'տաճարը, որ նախորդ թագավորները չէին կառուցել ...', նույն տեղում, 14 II:

գ) շաղկապող մասնիկի իմաստով՝ *meni haltamtip ... Mardija hupirri ... ir marriš-a ir halpiš* 'հետո էլամացիները ... բռնեցին այդ Մարդիային և սպանեցին նրան', նույն տեղում:

-a մասնիկի տարբեր, իրար հակասող իմաստները առաջ են բերել այդ մասնիկի հակասական մեկնություններ: Դրանցից ամենահավանականը թվում է Մաք-Ալփիհնի կարծիքը, ըստ որի այն արտահայտել է անավարտություն և կապող նշանակություն է ունեցել<sup>61</sup>: Ինչ վերաբերում է այդ մասնիկի հարաբերակցական / ստորադասական ֆունկցիայով հանդես գալուն, ապա պետք է նշել որ այն, որպես կանոն, գործածվում էր դասային ցուցիչների համադրությամբ, որոնց և պետք է վերագրել այդ ֆունկցիան:

#### -ta/i մասնիկը

Այն գործածվել է հիմնականում երկրորդական նախադասությունների բայերի հետ անցյալ վաղակատարի (պլյուսկվամպերֆեկտ) իմաստով. *ak u siian .. hudda appa Kammadda ... šariš-ta* 'և ես կառուցեցի տաճարը, որը Կամմադդան ... քանդել էր', DB 14: Արեմենյան էլամերենում այն երբեմն հանդես էր գալիս նաև նախադասությունը եզրավակող ձևորդի իմաստով՝ *innakki apadana Darijamaš ... uttaš-ta* "Դարեհը այս սպաղանան սարքեց / կառուցեց", A<sup>2</sup> Sa 3:

<sup>61</sup> McAlpin, նշված աշխատություն, 80:

-ta/i մասնիկի գործածության բոլոր դեպքերի վերլուծությունը ենթադրել է տալիս, որ այդ մասնիկը ծագում է -t դասային ցուցիչ և, ինչպես և մյուս դասային ցուցիչները, սկզբնապես գործածվել է երկրորդական նախադասության բայի հետ, որը հաճախ անցյալ վաղակատարի իմաստ է արտահայտել: Մակայն արդեն միջին էլամերենում -t դասային ցուցիչը տեղի է տվել անշունչ առարկաների -me ցուցիչն, որի հետևանքով, հավանաբար, -ta-ն ընկալվել միայն որպես անցյալ վաղակատարի ցուցիչ:

#### -da//te մասնիկը

Այս մասնիկը հիմնականում վկայված է մակբայների, դերանունների և քվականների կազմում, նշանակությունը պարզ չէ՝ *am-da* "այժմ", *daki-da* 'այլ', *marri-da* 'բոլոր':

#### Շաղկապներ

Էլամերենին հայտնի էին *ak* (Մէ և Աէ) և *kudda* (Աէ) համադասական շաղկապները: Արեմենյան էլամերենում հայտնի են մի շարք բաղադրյալ շաղկապներ, որոնց բաղադրիչ մասն էին կազմում *sap* 'երբ, քանի որ, մինչև որ, այնպես որ' և *anka* 'եթե': Միջին էլամերենում վկայված է *anka* շաղկապով միայն մեկ նախադասություն:

#### Շարահյուսություն

##### Նախադասության կառուցվածքը

Էլամերենին հայտնի էին նախադասության հետևյալ կառույցները.

ա) էրզատիվ (I խոնարհման բայով)՝ *Hubannumena sijan ... kušiš* "Հուբաննումենան տաճար ... կառուցեց", EKI 59 II;

բ) արտոյուտիվ (II խոնարհման բայերով)՝ *betip pīru ir-šarabba ... šinotap* 'ապստամբները հավաքվեցին ... և գնացին', DB 29;

գ) պասսիվ (II խոնարհման բայով)՝ *sijan Inšušinakme upatimma kušik* 'Ինշուշինակի տաճարը կառուցվեց', EKI 35 II:

Ինչպես տեսնում ենք, կառույց ա)-ն, մի կողմից հակադրվում էր ք)-ին էրգատիվ : արսուլյուտիվ հակադրության շրջանակներում, մյուս կողմից՝ գ)-ին ակտիվ : պասսիվ հակադրության շրջանակներում:

Արեմենյան շրջանի եռալեզու արձանագրություններում էլամերեն պասսիվ նախադասության սուբյեկտին միանում էին այսպես կոչված 'բացառական-գործիական' հոլովի -ikkimar կամ 'սեռական' հոլովի -na վերջավորությունները, ընդ որում առաջինը գործածվում էր այն նախադասություններում, որոնք համապատասխանում էին հին պարսկերեն պասսիվ կառույցի նախադասություններին, իսկ երկրորդը՝ հին պարսկերեն քվազի-էրգատիվ կառույցի էլամական տարբերակներում. u-ikkimar ap tirikka = hačama ašahja "իմ կողմից ասվեց" (կրավորական), DB 8; appa unina huddak = tja mana kartam ' ինչը որ ես արեցի' (քվազի-էրգատիվ), նույն տեղում, 58:

#### Բառերի դասավորությունը

Միջին էլամերենում բառերը նախադասության մեջ դասավորվում էին հետևյալ կարգով.

ենթակա - անուղղակի խնդիր - ուղիղ խնդիր - ստորոգյալ՝ u ... Insusinak in dunih 'ես ... ավեցի այն Ինշուշինակին', EKI 5a I-II:

Արեմենյան էլամերենում այն ավելի ազատ էր:

Ստորոգելիական վերադիրը միանում էր ենթակային վերջինիս դասային ցուցչի միջոցով՝ u ... sunki-k "ես թագավոր եմ", EKI, passim; nuku sunki-p-ut 'մենք թագավորներ ենք', DB 4:

Պատկանելությունը էլամերենում արտահայտվում էր

ա) հատկացյալի / որոշյալի դասային ցուցչի միացումով հատկացուցչին / որոշչին. sijan Naprate-p-me 'Նապրատենների տաճարը', EKI 7 IId II;

բ) նոր և, հատկապես, միջին էլամերենում հանդիպող հատուկ կառույցի միջոցով, որում հատկացուցիչը / որոշիչը նախորդում էր հատկացյալին / որոշյալին, իսկ վերջինիս հետևում էր որոշչի / հատկացուցչի դեմքին համապատասխանող ստացական դերանունը՝ u atta-ta 'հայրս (=ես, իմ

հայրը), DB 35; Mišdašba atte-ri "Միսդասբայի հայրը (=Միսդասբան, նրա հայրը)՝ նույն տեղում, 2:

Արեմենյան էլամերենում տարածված էր նաև հին պարսկերենից պատճենված մի կառույց, որում հատկացուցիչը / որոշիչը միանում էին հատկացյալին / որոշյալին հարաբերական դերանվան միջոցով՝ dajaus appa dac 'մյուս երկրները (=երկրները, որոնք մյուսները)', DB 14:

#### Բարդ ստորադասական նախադասություններ

Միջին էլամերենի համար բնորոշ էին անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները: Երկրորդական նախադասությունը նախորդում էր գլխավորին կամ սեպվում էր նրա մեջ՝ akka šalmumume humanra ... hat Napiriša... ri ukkur i r-takni 'ով իմ պատկերը / արձանը վերցնի ... Նապիրիշայի ցասումը նրա վրա թող իջնի', EKI 16 III-IV; u ... napiruri u r-tahhanra sub[mutu i] ... humah ak Šušun tengih 'ես ... քանի որ իմ աստվածն ինձ հրամայեց, այս քանդակը վերցրեցի և Շուշուն ուղարկեցի', նույն տեղում, 28A 1-2:

Արեմենյան շրջանի էլամերենը, ի տարբերություն միջին էլամերենից, հարուստ էր մակբայական ստորադասական շաղկապներով. **anka** šarak elmanda 'եթե հիմա դու մտածես', DNa 4:

Որոշիչ երկրորդական նախադասության կապը գլխավորի հետ իրագործվում էր նույն սկզբունքով, ինչ և որոշչի կապը որոշյալի հետ՝ որոշյալ անդամի դասային ցուցչի միջոցով: Վերջինս միանում էր երկրորդական նախադասության բային: Դասային ցուցչին, որպես կանոն, հաջորդում էր -a մասնիկը:

Միջին էլամերենում որոշիչ երկրորդական նախադասությունը հաճախ սկսվում էր հարաբերական բառերով, իսկ արեմենյան շրջանում, երբ դասային ցուցիչների դերը զգալիորեն նվազել էր, այդ բառերի գործածությունը պարտադիր էր. hal appa kušiba 'hal-ը, որ ես կառուցեցի' EKI 13A VIII; appa u huttara '(այն,) ինչ ես արեցի', DB, passim:

### Ուղիղ խոսք

Ուղիղ խոսքը էլամերենում սկսվում էր *tiri-* կամ *na-* «ասեք» բայով և եզրափակվում էր մի շարք մասնիկներով, որոնց գործածությունը կախված էր ներածող բայի դեմքից և թվից (1 դ. եզ. -*manka*, 3 դ. եզ. -*mara*, 3 դ. հոգն. -*mara* և անորոշ դիմավոր նախադասություններում -*maqa*)՝ *hi šila ap tiriša miteš ... halpiš-manka* “այսպես ասացի նրանց, գնացեք ... սպանեք”, DB 33:

Ներածող բայը կարող էր երբեմն բացակայել կամ դրվել ուղիղ խոսքի վերջում, եզրափակող մասնիկներից հետո՝ *akka šalnu ... ingi i n-dununku-mar ak turunra* “ով՝ արձանը չեմ տա՝ ասի”, EKI 74 40:

### Տիպաբանական բնութագիրը

Էլամերենի տիպաբանության վերաբերյալ արտահայտվել են բազմաթիվ իրարամերժ կարծիքներ. ոմանց կարծիքով այն անանցողական-պասսիվ կառույցի լեզու էր<sup>62</sup>, ուրիշները դասում են էլամերենը երգատիվ<sup>63</sup> կամ նոմինատիվ<sup>64</sup> լեզուների շարքին: Ըստ Կլիմովի, էլամերենի տիպաբանությունը զարգացել է ակտիվից դեպի նոմինատիվ<sup>65</sup>:

Այս տարածայնությունների պատճառն այն է, որ էլամերենի տիպաբանությունը բնութագրելիս գիտնականները հիմնվել են լեզվի առանձին փաստերի վրա, մինչդեռ լեզվի բովանդակային (կոնտենտիվ) տիպաբանությունը որոշելու համար անհրաժեշտ է լեզվի բոլոր մակարդակների սվյակները հաշվի առնող ամբողջական

<sup>62</sup> G. G. Cameron, *Persepolis Treasury Tablets, OIP 65*, Chicago, 1948, 18; G Steiner, *The Intransitive-passival Conception of the Verb of the Ancient Near East, Ergativity. Towards a Theory of Grammatical Relations*, London, 1979, 181-215.

<sup>63</sup> И. М Дьяконов, *Эламский язык, Языки древней Передней Азии*, М., 1967, 29; A. Kammenhuber, *Acta Antiqua*...22, Budapest, 1974, 204.

<sup>64</sup> G. Wilhelm, *Archäologische Mitteilungen aus Iran* 11, Berlin, 1978, 7-2; 15, 1982, 7-8.

<sup>65</sup> Г. А. Климов, *Типология языков активного строя*, М., 1977, 247-249.

համակարգային մոտեցում: Մտորև կշարադրվեն այդպիսի մոտեցման արդյունքները:

Էլամերենի *բառապաշարի* համար բնորոշ է գոյականների բաժանումը շնչավոր / ակտիվ : անշունչ / ինակտիվ և բայերի բաժանումը անցողական : անանցողական դասերի:

*Շարահյուսական* մակարդակում ուշադրության արժանի է, մի կողմից, նախադասության երգատիվ : արսոյուտիվ, մյուս կողմից՝ ակտիվ (ներգործական) : պասսիվ (կրավորական) կառույցների առկայությունը:

*Անվանական* համակարգում ուշադրության արժանի են հետևյալ փաստերը.

ա) գոյականների բաժանումը երկու դասի՝ ակտիվ / շնչավոր : ինակտիվ / անշունչ;

բ) թվի քերականական կարգը բնորոշ էր միայն ակտիվ գոյականներին;

գ) սեռական հոլովը արտահայտում էր միայն պատկանելություն, հարաբերություն և չէր գործածվում *genetivus subjectivus*-ի կամ *genetivus objectivus*-ի ֆունկցիայով;

դ) ածականների հատուկ դասի բացակայությունը:

*Անձնական դերանունների* համար հատկանշական էր ուղիղ խնդրի արտահայտությունը հատուկ հոլովածեով, որը սաարբերվում էր ենթակայի հոլովածեով:

*Մտացական դերանունների* համակարգում ուշադրության արժանի է օրգանական (անօտարելի) պատկանելություն արտահայտող ռեխիկ-տային ձևայինների առկայությունը:

*Բայական* համակարգում ուշադրության արժանի են լեզվի տիպաբանության տեսակետից նշանակալից հետևյալ առանձնահատկությունները.

ա) զարգացած ժամանակային համակարգի բացակայությունը՝ անցյալ ժամանակի (կատարյալ կերպի) ձևերի հակադրությունը ոչ-անցյալ ժամանակի (անկատար կերպի) ձևերին;

բ) բայերի հակադրությունը ըստ անցողականության : անանցողականության հատկանիշի անցյալ ժամանակում և այդ հակադրության բացակայությունը ոչ-անցյալ ժամանակում;

գ) ներգործական : կրավորական սեռերի հակադրությունը;

դ) անցողական բայի ուղիղ խնդրի և անանցողական բայի ենթակայի համընկնումը ռեզումպտիվ (ամփոփիչ) դերանվանական տարրերի մակարդակում:

Վերը նշված առանձնահատկությունները բնութագրում են էլամերենը որպես վաղ նոմինատիվ լեզու՝ ակտիվ և էրզատիվ լեզուներին բնորոշ մի շարք հատկանիշներով:

էլամերենի նոմինատիվ լեզու լինելու մասին վկայում են

ա) բայերի բաժանումը ըստ անցողականության : անանցողականության հատկանիշի;

բ) հայցական հոլովի ձևավորումը անձնական դերանունների համակարգում;

գ) բայերի ունիֆիկացված (նոմինատիվ) խոնարհումը ոչ-անցյալ ժամանակում;

դ) անցողական բայերի հակադրությունն ըստ սեռի;

ե) նախադասության ակտիվ և պասսիվ մոդելների հակադրությունը:

Մյուս կողմից, ածականների դասի բացակայությունը, էրզատիվ տիպաբանության լեզուների համար բնորոշ նախադասության էրզատիվ : արսույուտիվ մոդելների և բայի անցյալ ժամանակում էրզատիվ : արսույուտիվ խոնարհումների հակադրությունը, սեռական հոլովի ոչ լիովին զարգացած լինելը վկայում են այն մասին, որ էլամերենը զարգացած նոմինատիվ տիպաբանության լեզու չէր և զանվում էր վաղ նոմինատիվ փուլում:

էվ, վերջապես, որպես ակտիվ տիպաբանության ռեյիկաներ պետք է զնահատել գոյականների բինար հակադրությունը (ակտիվ : ինակտիվ), հոգնակի թվի բացակայությունը ինակտիվ գոյականներում, օրգանական : ոչ-օրգանական պատկանելության համահարաբերակցության հետքերը, անանցողական խոնարհման հարացույցում հոգնակի ձևերի, ինչպես նաև 3 դ. եզակի թվի ակտիվ դասային ցուցիչ -r-ի բացակայությունը: Վերջին փաստը վկայում է այն մասին, որ էլամերենի անանցողական խոնարհման հիմքում ընկած էր ինակտիվ (վիճակի բայերի) խոնարհումը, որը լեզվի տիպաբանության փոփոխության հետևանքով վերաիմաստավորվել էր, ընդգրկելով նաև անանցողական գործողության բայերը:

### Ամփոփում

Ստորև կներկայացվեն խոռիերենի, ուրարտերենի և էլամերենի տիպաբանության համեմատության արդյունքները:

Խոռիերենը զարգացած էրզատիվ լեզու էր (բացառություն են կազմում միայն վաղ բարբառները, որտեղ դեռ զգալի սեղ ունեն նախորդ՝ ակտիվ փուլի հետքերը):

Ուրարտերենը, նույնպես էրզատիվ տիպաբանության լեզու լինելով, ի տարբերություն խոռիերենից, հանդես է բերում նոմինատիվ տիպաբանության լեզուներին հատուկ գծեր: Թեև, ինչպես վերը նշվեց, էրզատիվ տիպաբանության ձևավորումը տեղի ունեցավ դեռ նախախոռիերարտական շրջանում, սակայն լեզվի հետագա վերակառուցումը ակտիվ տիպաբանությունից էրզատիվի երկու լեզուներում ընթացավ տարբեր հուներով: Դրա հետևանքով խոռիերենը կորցրեց 3 դեմքի երկու անձնական դերանվանական ցուցիչներից՝ ակտիվ -b և ինակտիվ -n, առաջինը, պահպանելով էրզատիվ դերանվանական ցուցիչն հակադրված միայն մեկ՝ արսույուտիվ շարքի



դերանում: Ուրարտերենում, ի տարբերություն խուրիերենից, երկու դերանուններն էլ պահպանվեցին, վերահիմաստավորվելով համապատասխանաբար սուբյեկտի և օբյեկտի, դրանով իսկ մոտեցնելով ուրարտերենը նոմինատիվ լեզուներին:

Հենց դա է այդ երկու ցեղակից լեզուների տիպարանական տարբերության պատճառը, այլ ոչ թե նոմինատիվ հնդեվրոպական լեզուների ազդեցությունը, թեև այն նույնպես չի կարելի ժխտել (հմտ. Լոնմբի անուղղակի խնդրի դերանվանական ցուցիչը, որը, ակնհայտորեն հնդեվրոպական ազդեցության հետևանք է):

Ինչ վերաբերում է էլամերանին, ապա այստեղ բայական համակարգում կատարվել են մոտավորապես նույնպիսի փոփոխություններ, ինչ և ուրարտերենում դերանվանական համակարգում. նորաստեղծ էրգատիվ խոնարհման կողքին պահպանվել են, մի կողմից, ակտիվ (անցողական և անանցողական) խոնարհումը, որը վերահիմաստավորվել է նոմինատիվ լեզուներին հասուկ ներգործական սեռին, մյուս կողմից՝ ինակտիվ խոնարհումը, որը վերահիմաստավորվել է կրավորականի (ի հակադրություն ներգործականի) և միաժամանակ ձեռք բերել նոր իմաստ, այն է՝ էրգատիվ խոնարհմանը հակադիր արսոլյուտիվի:

Իսկ հին պարսկերենի ազդեցությունը նոր և, հատկապես, արեմենյան էլամերենում պրզապես նպաստել է լեզվի նոմինատիվացման հետագա ընթացքին:

#### Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատությունների ցանկը

##### Մենագրություններ

1. Хурритский и урартский языки, Ереван, 1985, 193с.
2. The Elamite Language, Roma, 1998, 100p.

##### Հղվածներ

1. Шумерско-хурритский словарь из Рас-Шамры как источник по хурритской диалектологии, *ВДИ*, 1973, №3, М., 21-38;
2. Из старохурритских заклинаний, *Древний Восток* 2, Ереван, 1976, 251-264;
3. Диалектное членение хурритского языка (Краткая сводка), *Древний Восток* 3, Ереван, 1978, 39-46;
4. On the Typology of the Hurro-Urartian Verb, *Societies and Languages of the Near East (Studies in Honour of I. M. Diakonoff)*, Warminster, Wilts, 1982, 165-168;
5. Заметки по хурритской и урартской грамматике, *Древний Восток* 4, Ереван, 1983, 174-178;
6. Towards the Categories of Aspect and Version in Hurro-Urartian, *Zeitschrift für Assyriologie* 74/1, Berlin, 1984, 92-97;
7. Заметки по хурритской и урартской грамматике 2, *Древняя Анатолия*, М., 1985, 22-25;
8. On Some Models in Hurrian Onomastics, *Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians* 2, Bethesda, 1986, 153-156;
9. О соотношении хуррито-урартских диалектов, *Древний Восток* 5, Ереван, 1988, 213-223;
10. К типологической характеристике хурритского и урартского языков, *Кавказско-ближневосточный сборник* 8, 1988, 94-101;
11. On the Typological Characteristics of the Elamite Language, *Suhnu IV: Everyday Life in Ancient Near East*, Poznan, 1993, 143-150;
12. On Some Hurro-Urartian Phonemes in the Light of the Armenian Evidence, *Studi Micenei ed Egeo-anatolici* 34, Roma, 1994, 111-113;
13. Sur la caractéristique typologique de l'hourrite et l'ourartéen, *Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians* 5, Winona Lake, 1995, 21-27;

14. Notes on Elamite Phonology, *Studi Micenei ed Egeo-anatolici* 35, Roma. 1995, 105-109;
15. The Hurrian Verb Revisited, *Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians* 10, Bethesda, 1999, 257-265.

**ХАЧИКЯН МАРГАРИТА ЛЕВОНОВНА**  
**ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ТИПОЛОГИЧЕСКОГО**  
**ИССЛЕДОВАНИЯ ДРЕВНИХ ЯЗЫКОВ ПЕРЕДНЕЙ АЗИИ**  
**(ХУРРИТСКОГО, УРАРТСКОГО, ЭЛАМСКОГО)**

диссертация на соискание ученой степени доктора филологических наук

по специальности 10.02.03 - Сравнительное и типологическое языкознание

Защита состоится 3 декабря 1999 г. по адресу 375001, Ереван, ул. Абовяна 15

на объединенном специализированном совете 019 Института языкознания им. Г. Ачаряна НАН РА и Ереванского государственного университета

**РЕЗЮМЕ**

Письменные памятники древней Передней Азии, сохранившие факты разнообразных языков в их многовековом развитии, содержат интереснейший материал для специалистов по лингвистической типологии, позволяющий выявить структурную эволюцию разнородных языков на протяжении значительных отрезков времени.

Представленная к защите работа посвящена трем древним языкам Передней Азии - относимым к восточнокавказской семье языков хурритскому и урартскому и эламскому, возводимому к дравидийским языкам.

В работе дается описание вышеназванных языков, основанное на детальном лингвистическом анализе практически всех текстов на этих языках, выявляются диалектные различия, дается их типологическая характеристика в эволюции, что способствует истолкованию целого ряда языковых фактов, не объяснимых в рамках доминирующего в этих языках континентного типа (эргативного в хурритском и урартском и ранненоминативного в эламском).

Значительный интерес с точки зрения типологии хурритского и урартского языков представляет субъектный местоименный формант 3 л. ед. ч. -b (хурр.)/-be (ур.) при глаголах абсолютного спряжения. Особенностью этого показателя является то, что в ранних диалектах он засвидетельствован не только в составе непереходных, но и переходных глаголов (но не в глаголах состояния). Такое употребление этого форманта указывает на то, что он является показателем субъекта действия в противоположность субъекту состояния. Этот факт следует объяснять как реликт активного строя, для которого характерно противопоставление субъекта действия субъекту состояния. В более поздних диалектах хурритского языка этот показатель выходит из употребления, субъект переходного глагола выражается при помощи показателя эргативного ряда, который противопоставлен субъекту непереходного глагола (в том числе и глагола состояния) и объекту переходного глагола -n(e)/-0, что типично для языков эргативной типологии, каковым является хурритский язык.

Несколько иначе протекает развитие обсуждаемого форманта в урартском языке: здесь он выступает в функции субъекта

непереходного действия и, таким образом, противопоставлен субъекту переходного действия (что обычно для языков эргативной типологии), но не совпадает с показателем объекта непереходного глагола. Таким образом, в урартском фактически объект переходного глагола получает самостоятельное оформление, противопоставляясь субъекту не только переходного, но и непереходного глагола, что следует интерпретировать как инновацию, свойственную языкам номинативной типологии.

Не менее интересным с точки зрения типологии является распределение тематических гласных при глаголе. По мнению диссертанта, в хуррито-урартском имелось 4 тематических гласных: -а, -і, -о, -и (в орфографиях, различающих гласные и и о, первый передавался знаком U, второй - Ú). Гласные -а, -і, -о были показателями действия, гласный -и/е - показателем состояния, -о выражал переходное, -і - субъекто-направленное (безобъектное) действие, -а - движение. Противопоставление переходных форм с показателем -о безобъектным формам с показателем -і, позволяет предположить, что гласные -о и і восходили соответственно к показателям центробежной и центростремительной версий.

Типологически значимо также наличие в архаичных диалектах хурритского языка притяжательных местоимений 3 л. ед. и 2 л. мн. ч., выпадающих из хуррито-урартской парадигмы притяжательных местоимений. Эти местоимения, очевидно, являются реликтами категории неотчуждаемой принадлежности, характерной для языков активной типологии.

Не менее важным для типологической характеристики хурритского языка является тот факт, что в парадигме не-эргативного спряжения в архаичных диалектах, в отличие от позднейших, не известно противопоставление по времени. Этот факт указывает на то, что не-эргативная парадигма хуррито-урартского глагола восходит к

активному периоду хуррито-урартского языка (активным языкам категория времени не известна).

Анализ данных разновременных диалектов хурритского языка, с одной стороны, и урартского языка, с другой, приводит к заключению, что они, будучи языками эргативной типологии с характерной для эргативных языков оппозицией эргативной и абсолютивной конструкций предложения, эргативного (переходного) и абсолютивного (непереходного) спряжений и эргативного и абсолютного падежей, обнаруживают некоторые реликтовые черты активного строя (особенно в архаичных диалектах хурритского) и инновационные черты номинативной типологии в урартском.

Наличие черт, характерных для активных языков, свидетельствует об активном прошлом хуррито-урартского праязыка, а тот факт, что показатель эргативного падежа, как и субъектные окончания эргативного ряда являются общими для обоих языков, указывает на то, что переход от активной типологии к эргативной произошел еще на праязыковой стадии.

Как и в исследованиях по хурритскому и урартскому языкам, в работе по эламскому языку дается описание языка, уточняется значение ряда формантов и делается ряд наблюдений, важных для установления типологии языка. Наиболее интересными в этом плане являются выявление на уровне резумптивных местоимений оппозиции эргатив : абсолютив, характерной для эргативных языков, выявление реликтов категории неотчуждаемой принадлежности, объяснение отклонений в формах 3 л. ед. и мн. ч. в парадигме непереходного спряжения.

Противопоставление объектного падежа субъектному в личных местоимениях (существительным это противопоставление не было известно), наличие единого спряжения, не зависящего от

переходности/непереходности глагола, залоговое противопоставление характеризуют эламский язык как язык номинативной типологии.

Помимо черт, свойственных номинативным языкам, эламский обнаруживает также особенности, характерные для эргативных и активных языков.

Типичными для эргативной типологии являются наличие оппозиции эргатив : абсолютив на уровне резумптивных местоимений и противопоставление эргативного спряжения абсолютивному в системе прошедшего времени.

Оппозиция активных (одушевленных) существительных и пассивных (неодушевленным), наличие формы множественного числа только у активных существительных, а также двух рядов притяжательных местоимений, один из которых, очевидно, выражал неотчуждаемую принадлежность, являются следами активного состояния в эламском языке.

Из вышесказанного следует, что эламский был языком ранненоминативного состояния со значительными чертами эргативной и активной типологии, а тот факт, что в форме 3 л. ед. ч. непереходного спряжения отсутствует показатель активного субъекта -г, в отличие от глаголов нейтрального по отношению к переходности/непереходности спряжения настоящего-будущего времени, указывает на то, что первое, в отличие от второго, восходит к пассивному спряжению.

В пользу предположения, что непереходное спряжение восходит к пассивному, служит также тот факт, что форма 3 л. мн. ч. выпадает из парадигмы этого спряжения: поскольку множественное число в языках активной типологии несвойственно пассивным существительным и, соответственно, глаголам пассивного спряжения, то отсутствие в ней формы множественного числа и заимствование ее

из другой системы (форма 3 л. мн. ч. непереходного глагола совпадает с формой активного причастия) вполне закономерно.

Ниже представляем результаты сравнительно-типологического анализа исследуемых языков.

Хурритский язык был развитым языком эргативной типологии. Исключения составляют ранние диалекты, в которых заметное место занимали реликты активного строя.

Эргативным был и урартский язык, однако, в отличие от хурритского, он обнаруживает особенности номинативного строя.

Расхождения в типологии этих близкородственных языков объясняется тем, что, невзирая на то, что перестройка их типологии началась уже в хуррито-урартском языке (формирование эргативного спряжения и эргативного падежа), дальнейшая структурная перестройка этих языков протекала по-разному. Если хурритский из двух местоименно-личных показателей 3 л. (активного -b и пассивного -n) сохранил только первый, переосмысленный в личный показатель абсолютного ряда, то в урартском оба были сохранены: активный показатель был переосмыслен в показатель субъекта непереходного действия, а пассивный - в показатель объекта. Тем самым урартский язык продвинулся в направлении номинативной типологии.

В эламском же языке в системе глагола произошли примерно те же изменения, что в урартском в системе личных местоименных показателей: из активного спряжения развилось единое спряжение, типичное для номинативных языков, а пассивное было переосмыслено в абсолютное, противопоставленное эргативному.

К. Ю.  
20.10.2012